

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ՏՐԱՊԻԶՈՆԻ ԿՈՆՖԵՐԱՆՍԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

(Փետրուարի 10/23 – Ապրիլի 9/22 1918)

ՀՐԱՆԴ ԱԻԵՏԻՍԵԱՆ

Թղթակից անդամ՝

Հայաստանի Հանրապետության

Գիտությունների Ազգային Ակադեմիայի

Հազար ինն հարիւր տասնեօթ Դեկտեմբեր 9/22-ին Բրեստ-Լիտովսկում բացուեց Քառեակ Միութեան տէրութիւնների՝ Գերմանիայի, Աւստրո-Հունգարիայի, Բուլղարիայի, Թուրքիայի եւ Խորհրդային Ռուսաստանի հաշտութեան կոնֆերանսը: Ռուսաստանի եւ Թուրքիայի պատուիրակութիւնների քաղաքական յանձնաժողովի առաջին նիստում, Դեկտեմբեր 15/28-ին, օսմանեան պատուիրակութիւնը ներկայացրեց հաշտութեան հիմնական պայմանները՝ «Օսմանեան եւ ռուսական կառավարութիւնների համաձայնութիւնը, որի հետեւանքը հանդիսանալու է հաշտութիւն եւ յաւերժ բարեկամութիւն» վերտառութեամբ: Հիմնական դրոյթն էր՝ 1878-ի ռուս-թրքական սահմանների վերականգնումը, «պատերազմի ժամանակ ռուսների գրաւած Օսմանեան Կայսրութեանը պատկանող ասիական բոլոր գաւառներից»՝ այսինքն Արեւմտեան Հայաստանից ռուսական զօրքերի դուրս հանումը, եւ այն Թուրքիային յանձնելը⁽¹⁾:

Այս պայմանների կատարումը Թուրքիան ապահովել էր Գերմանիայի հետ 1914-ի Օգոստոսի 2-ին եւ 6-ին կնքած պայմանագրով եւ համաձայնագրով: Գերմանիան պարտաւորուել էր հասնել Թուրքիայի արեւելեան սահմանների այնպիսի ուղղման՝ որը նրան «հնարաւորութիւն կը տայ անմիջական կապ հաստատել մուսուլմանական տարրերի հետ Ռուսաստանում»⁽²⁾: «Արեւելեան սահմանների ուղղում» նշանակում էր ռուսական Հայաստանի նուաճումը⁽³⁾ եւ «Մեծն Թուրքիայի» ստեղծումը⁽⁴⁾:

Բարձրագույն Դուռը, ինչպէս յայտնում էր Թուրքական բանակի գլխաւոր շտաբի պետ գերմանական զենեքաւ Զեքթը Գերմանիայի արտաքին գործերի եւ ռազմական նախարարութիւններին՝ յանձնարարել էր իր ներկայացուցիչներին Բրեստում առաջ քաշել ոչ միայն Կարսի, Արգահանի եւ Բաթումի մարզերի Թուրքիային անյապաղ յանձնելու պահանջը, այլեւ «անկախ Կովկասեան Հանրապետութեան» ճանաչումը, նրա գործերից Ռուսաստանի հրաժարուելը, Ռուսական Կայսրութիւնում մուսուլման ժողովուրդների ինքնորոշման ճանաչումը՝ ընդհուպ մինչեւ Կազան, Օրենբուրգ, Թուրքեստան եւ Բուխարա⁽⁵⁾։ Դրանով Թուրքիան ցանկանում էր հասնել «իր բնական» պետական եւ քաղաքական սահմաններին՝ մինչեւ Պամիր եւ Սիբիր, ընդգրկել եւ միացնել իր բոլոր ազգակիցներին, առաջնորդուելով կրօնական զգացմունքներով՝ «ազատել իսլամական աշխարհը անհաւատների իշխանութիւնից», եւ ստեղծել «Թուրանական մեծ պետութիւն»⁽⁶⁾։ Անհրաժեշտ էր Գերմանիայի նոր սատարումը։ Եւ այն չյապաղեց։ Ռայխկանցլէր Հերտլինգի մօտ 1917 Դեկտեմբեր 6-7-ին կայացած խորհրդակցութիւնից յետոյ Արեւելեան ճակատի հրամանատարութեանը յանձնուեց զենեքաւ Լիւդենդորֆի հրահանգը․ հաշտութեան բանակցութիւններ վարելիս ապահովել ռուսական զօրքերից «... Հայաստանի մաքրումը»⁽⁷⁾։ Ինչպէս յայտնում էին Բարձրագույն Դրանը Բեռլինում Թուրքիայի դեսպան եւ նախկին մեծ վեզիր Հակըլ փաշան եւ Թուրքիայի արտաքին գործերի մինիստր Նեսիմի բէյը 1917 թուի Դեկտեմբերի 12-ին եւ 20-ին (մինչեւ Բրեստի կոնֆերանսի սկսուելը) ստացել էին եւ Գերմանիայի արտաքին գործերի մինիստր Փոն Քուլմանի համաձայնութիւնը Թուրքական նկրտումների պաշտպանութեան հարցում՝ Օսմանեան Կայսրութեան հողերի ամբողջականութեան եւ սուլթանական բոլոր իրաւունքների սատարման ներառումով, այդ թւում եւ 1877-1878-ի ռուս-թուրքական պատերազմի հետեւանքով Ռուսաստանին անցած հողերի մաքրումով։ Ստանալով այս տեղեկութիւնները՝ Բարձրագույն Դուռը հրահանգեց բեռլինեան իր ներկայացուցիչներին՝ «Գերմանիայի եւ Աւստրո-Հունգարիայի ձեռքում գտնուող ռուսական հողերի պարպումից առաջ ապահովել ռուսների ձեռքում գտնուող օսմանեան հողերի պարպումը»⁽⁸⁾։

Բեռլինում եւ Բրեստում ասելով իր խօսքը, Թուրքական կառավարութիւնն իր զիւանագիտական խաղերը սկսեց Անդրկովկասեան Կոմիսարիատի հետ։ 1918 թուի Յունուարի 1-14-ին Թիֆլիսում ստացուեց կովկասեան ճակատի Թուրքական զօրքերի հրամանատար Վեհիբ փաշայի հեռագիրը օսմանեան կառավարու-

թեան առաջարկութեամբ՝ «Կովկասի անկախ կառավարութեան հետ» անջատ հաշտութիւն կնքելու, այդ նպատակով «Կովկասի անկախ հանրապետութեան մայրաքաղաք» պատուիրակութիւն ուղարկելու վերաբերեալ⁽⁹⁾ :

Այդպիսով, ինչպէս Անդրկովկասի իշխանութիւնները, այնպէս էլ Թուրքիան չէր ճանաչում Խորհրդային Ռուսաստանի ժողկոմիսորհի Դեկտեմբեր 16-ի որոշումով կովկասեան գործերի ժամանակաւոր արտակարգ կոմիսար նշանակուած Ստեփան Շահումեանի լիազօրութիւնները, չէր ընդունում ժողովրդական կոմիսարների խորհրդի 1917 թուի Դեկտեմբեր 29-ի հրովարտակը «Թուրքահայաստանի մասին»⁽¹⁰⁾ : «Հաշտութեան բանակցութիւնների ընթացքում ուսները առաջարկում են հանրաքուէ անցկացնել Արեւելեան Անատոլիայում, որ նրանք «Հայաստան» են անւանում: Նրանց պատասխանում է, թէ Օսմանեան Կայսրութիւնում այդպիսի հարց գոյութիւն չունի, ներքին հարցերն էլ լուծւում են ըստ սահմանադրութեան» յայտնում էր Բարձրագոյն Դրանը Ահմէդ Նեսիմին 1917 թուի Դեկտեմբերի 29/1918 Յունուարի 11-ին: Թուրք գործիչների մեկնաբանութեամբ՝ «Թուրքահայաստանի մասին» հրովարտակով բոլշեւիկները ցանկանում էին Արեւելեան Անատոլիան կցել Կովկասեան Հայաստանին, այդ բոլորը «կլանելով» դուրս գալ Տիգրանակերտ, այնտեղից՝ Միջերկրական ծով: Նրանք դժգոհ էին, որ «իրենց Հայաստան կոչած երկրում» բոլշեւիկները պահանջում են հիմնել հայկական կառավարութիւն, հայկական ոստիկանութիւն, այսինքն՝ բանակ, նրա նպատակը տեսնելով «հայերի կողմից մոլոսուլմանների աւելի դիւրին ոչնչացման մէջ»⁽¹¹⁾ : «Հայկական գործօնի»՝ Արեւմտեան Հայաստանի ինքնորոշման ժխտման դիրքորոշմամբ էր առաջնորդւում Թուրքական կառավարութիւնը Բրեստում. այդ սկզբունքը նա ձգտում էր անցկացնել եւ Անդրկովկասի կառավարութեան հետ ձեռնարկուող բանակցութիւններում՝ ամէն կերպ փորձելով չըրջանցել Ռուսաստանը:

Այլ էր Անդրկովկասի կառավարութեան մօտեցումը, որն արտայայտուեց էնվէր փաշային 1918 թուի Յունուար 15/28-ին կոմիսարիատի տուած պատասխանում. թէեւ նա չի ճանաչում Ռուսաստանի կենտրոնական կառավարութիւնը, սակայն երկրամասը հանդիսանում է Ռուսաստանի Հանրապետութեան անբաժանելի տարածքը, հետեւաբար անհրաժեշտ է պատերազմի վերացման գործողութիւնների համաձայնեցում «Ռուսաստանի տարածքային միաւոր միւս ինքնավար կառավարութիւնների հետ, որոնք հաւասարապէս շահագրգռուած են հաշտութիւն կնքելու մէջ»⁽¹²⁾ :

Նկատի էր առնւում Ուկրաինայի կենտրոնական Ռադան եւ Հա-
րաւ-արեւելեան միութիւնը, որոնց ծանուցուեց թուրքական ա-
ռաջարկութիւնների մասին⁽¹³⁾։ Այս մասին՝ թրքական առաջար-
կութիւնների փաստաթղթերի պատճէններով ծանուցուեց նաեւ
դաշնակից ու չէզոք պետութիւնների թիֆլիսում հաւատարմա-
գրուած դիւանագիտական ներկայացուցիչներին⁽¹⁴⁾։

Այդ ժամանակ Բրեստում սկսուել էր հաշտութեան բանակ-
ցութիւնների երկրորդ փուլը (1917 թուի Դեկտեմբերի 27/1918
թուի Յունուարի 9 - 1918 թուի Յունուարի 28/Փետրուարի 10)՝
Հայկական Հարցի բազմիցս արծարծումով։ Հաստատուն էր Կոնս-
տանդնուպոլսում նախկին դեսպան եւ այժմ Գերմանիայի ար-
տաքին գործերի մինիստր Ֆոն Քուլմանն իր եւ գերմանական միւս
քաղաքագէտների թուրքերին տուած խոստումների պաշտպանու-
թեան հարցում։ Քառեակ Դաշինքի տէրութիւնների համար հաշ-
տութեան պայմանագիրը կը լինէր անընդունելի՝ «եթէ նրա մէջ
չլինեն դիւանագիտական երաշխիքներ, որ մեր դաշնակիցներից
գրաւուած մարզերը Պետրոգրադի կառավարութեան զօրքերի կող-
մից կը մաքրուեն», — յայտարարեց Քուլմանը։ Խորհրդային Ռու-
սաստանի Պատուիրակութեան ղեկավար եւ արտաքին գործերի
ժողովրդական կոմիսար Լեւ Տրոցկին բազմիցս ընդգծեց Հայկա-
կան Հարցի լուծման եւ Հայաստանի ինքնորոշման հարցի առաջ-
նահերթ քննարկման անհրաժեշտութիւնը, որին Քուլմանը մօտե-
ցաւ բացասաբար։ Հայկական Հարցը համարելով բանակցութիւն-
ներում «դեր չխաղացող հարց»՝ Քուլմանը բազմանշանակալից ա-
սաց թէ եթէ յաջողուի հասնել համաձայնութեան միացած հարցե-
րում՝ «բանակցութիւնների խզումը Հայկական Հարցի պատճառով
կը լինի քիչ հաւանական»⁽¹⁵⁾։ Գերմանա-թուրքական համերաշ-
խութիւնը եւ մշակուած ծրագրերն աւելի խորապէս դրսեւորուե-
ցին եւ բազմաբնոյթ արտայայտուեցին խորհրդա-թուրքական
պատուիրակութիւնների 1918 թուի Յունուարի 21/Փետրուարի 3
եւ 26 Փետրուարի/10 Ապրիլի կայացած բանակցութիւնների ժա-
մանակ, որոնք անցան Թալաւթ փաշայի նախագահութեամբ⁽¹⁶⁾։

Թուրքական Պատուիրակութեան ուշադրութիւնը հրաւի-
րելով «ստացուած ստոյգ տեղեկութիւնների վրայ» որ «Օսմանեան
կառավարութիւնը փորձել է կամ փորձում է բանակցութիւններ
վարել կովկասեան կառավարութեան հետ» եւ չեշտելով, որ խոր-
հրդային կառավարութիւնը չի բողոքում նման փորձերի դէմ՝
Տրոցկին յայտարարեց. «Եթէ հաստատուի հաղորդումն այն մա-

սին, որ Օսմանեան Պատուիրակութիւնը վարում է բանակցութիւններ կովկասեան կառավարութեան հետ՝ մենք ստիպուած կը լինենք սպասել այդ բանակցութիւնների արդիւնքին»⁽¹⁷⁾ :

Ընդունելով գործին անտեղեակ մարդու կեցուածք եւ ժխտելով կովկասեան կառավարութեան հետ հաշտութիւն կնքելու համար բանակցութիւններ վարելու փորձերը՝ Հակկը փաշան սեթեւեթեց. «մեզ ոչինչ յայտնի է այն մասին, որ Օսմանեան Կայսրութիւնը ցանկութիւն ունենար կնքել ինչ որ պայմանագիր կովկասեան ժողովուրդների հետ եւ չենք կարծում, որ այդ լուրը ճիշդ է: Յիրաւի, մեզ համար շատ հետաքրքրական կը լինէր իմանալ՝ ո՞ւմ է պատկանում Կովկասը: Մինչեւ հիմա կարծում էինք, որ Կովկասը պատկանում է Ռուսաստանին եւ մենք երբեք չենք փորձել եւ մտադիր չենք եղել եւ հնարաւորութիւն չենք ունեցել անել ինչ որ այլ փորձեր: Եթէ մենք Կովկասում ճանաչէինք անկախ կառավարութիւն՝ ապա յայտարարութիւնը, որ մենք օսմանեան կառավարութեան անունից ներկայացրել ենք Պ. Տրոցկուն՝ նշանակութիւն չէր ունենայ, որովհետեւ այդ յայտարարութեան մէջ մենք խնդրում ենք ռուսական կառավարութեանը կատարել իր պարտականութիւնը, մեր կարծիքով, նրա զօրքերի կողմից գրաււած տարածքում»: Օգտագործելով դիւանագիտական ճամարտակութիւնները, նա շարունակեց. «բայց եթէ Պ. Տրոցկին ցանկանում է մեզ ասել, որ Կովկասում գոյութիւն ունի անկախ կառավարութիւն, եւ այդ անկախ կառավարութիւնը չի լսում ռուսական կառավարութեանը՝ ապա այդ դէպքում ստացւում է նոր վիճակ, որի առիթով մենք դեռ պէտք է մտածենք»⁽¹⁸⁾ :

Չյապաղեց եւ Տրոցկու պատասխանը. «ինչ վերաբերում է Կովկասին՝ ապա մենք բաւականութեամբ արձանագրում ենք, որ օսմանեան կառավարութիւնը չի արել, չի անում եւ չի նախատեսում տանել ինքնուրոյն բանակցութիւններ Կովկասում գոյութիւն ունեցող մարմինների հետ: Ինչ վերաբերում է առաջին հարցին, թէ ում է պատկանում Կովկասը՝ ապա մենք չենք կարող այդ հարցը, յամենայնդէպս, դիտել այնպէս, թէ Կովկասը իրենից ներկայացնում է ոչ մէկին չպատկանող երկրամաս: Կովկասը առաջին հերթին պատկանում է կովկասեան ժողովուրդներին, իր անցեալով նա կապուած է Ռուսաստանի հետ եւ մինչդեռ կովկասեան ժողովուրդները չեն յայտարարել Ռուսաստանից անջատման մասին իրենց ցանկութիւնը՝ նա մնում է Ռուսաստանի Դաշնակցային Հանրապետութեան մէջ»⁽¹⁹⁾, եւ կովկասեան բանակը գտնւում է ժողովրդական կոմիսարների խորհրդին ենթակայ իշխանութիւնների տրամադրութեան տակ:

Հակկը փաշայի հաւաստումները Ռուսական Պատուիրակութեան ուշադրութիւնը չեղելու համար էին. նպատակը ակնյայտ էր — Ռուսաստանի կենտրոնական իշխանութիւններից անկախ գործող անդրկովկասեան կառավարութեան միջոցով հասնել աւելի հեշտ եւ շահեկան արդիւնքների: Եւ պատահական չէ, որ հենց բրեստեան այդ բանակցութիւնների եւ հաւաստիացումների օրերին, 1918 թուի Փետրուարի 1/14-ին, Թիֆլիսում ստացուեց Վեհիբ փաշայի հեռագիրը, որում տեղեկացւում էր Բրեստ Լիտովսկի հաշտութեան կոնֆերանսին երկրամասի կառավարութեան պատուիրակութեանը մասնակից դարձնելու Քառեակ Դաշինքի տէրութիւնների մտադրութեան մասին: «Կենտրոնական տէրութիւնների Բրեստ-Լիտովսկում հաւաքուած պատուիրակութիւնները պատրաստ են ներկայացնել իրենց ամբողջ ձգտումները Անդրկովկասի կառավարութեան անկախութեան համար, որը, վստահ էր, լիակատար յաջողութեամբ կարող է Բրեստ Լիտովսկ ուղարկել իր լիազօրուած պատուիրակութիւնը»⁽²⁰⁾, ասուած է հեռագրում:

Բացի Բրեստ հրաւիրուելուց, Թիֆլիսում Յունուարի 28/Փետրուարի 10-ին ստացուեց մէկ հեռագիր եւս՝ «Անդրկովկասեան Հանրապետութեան ճանաչման» եւ «հաշտութեան վերջնական պայմանագիր ստորագրելու համար թուրքական կառավարութեան պատուիրակութեանը Թիֆլիս ուղարկելու մասին»⁽²¹⁾:

Թուրքական կառավարութեան առաջարկները եւ Անդրկովկասի արտաքին քաղաքականութեան հարցերը բուռն քննարկուեցին 1918 թուի Փետրուարի 10/23-ին բացուած Սէյմի առաջին⁽²²⁾ եւ ապա 13/26-ի, 14/27-ի եւ 15/28-ի նիստերում, եւ ամփոփուեցին Փետրուարի 16/Մարտի 1-ի նիստում: Մինչ այդ՝ Թուրքիայի հետ հաշտութեան սկզբունքները քննարկուեցին Սէյմի եւ Անդրկովկասի Կոմիսարիատի հաշտութեան պատուիրակութիւնների Փետրուարի 13 - 15/26 - 28-ը կայացած համատեղ նիստերում⁽²³⁾:

Թուրքերի առաջարկութիւնները Սէյմի անդամների մօտ առաջացրին տարբեր մտորումներ ու խոհեր, եւ յանգեցրեցին իրարամերժ եզրակացութիւնների: Մի կողմից առաջ էր քաշուած Անդրկովկասի քաղաքականապէս անկախութեան թեզը, միւս կողմից բերուած նրա մերժման կոուսնները: Ալեքսանդր խատիսեանի ելոյթից երեւում է, որ Ռուսաստանից անջատուել ձգտող հոսանքների հիմնական պատճառը հակաբոլշեւիզմն է. «Թող ռուսական քաղաքացիները թօթափեն իրենցից գերմանական այդ լուծը եւ ոչ մոլոսովմանները, ոչ վրացիները, ոչ հայերը չեն փնտռի այլ կողմնորոշում»⁽²⁴⁾, յայտարարեց խատիսեանը:

Նիստերում առաջ քաշուեց Արեւմտեան Հայաստանի ինքնորոշման եւ ինքնավարութեան հարցը: Ա. Զուրաբեանի, Ա. Խատիսեանի, Յ. Քաջազնունու, Ս. Տիգրանեանի այդ հարցադրմանը հակառակ Խան Խոյսկին առաջ քաշեց ոչ միայն հայերի՝ այլեւ Ռուսաստանի սահմաններում բոլոր ազգութիւնների ինքնորոշման հարցը: Գանինը պնդում էր, որ ինքնորոշում կը պահանջի եւ Թուրքիան, այդ ժամանակ «նրան կ'անցնեն Կազբեկն ու էլբրուսը»: Հաջինսկին արեւելեան Անատոլիայի ժողովուրդների ինքնորոշման իրաւունքի հարցը համարում էր վաղաժամ. «դժուար կը լինի այն ստանալ Թուրքիայից, քանի ինքներս մեզ մօտ դրան չենք հասել»՝ պնդում էր նա: Ի. Ռամիշվիլին մոլորում էր՝ մտածելով որ «Թուրքիան ինքը չահագրգռուած է Թուրքահայաստանին լաւ գոյութիւն տալու մէջ» եւ ստեղծել այնպիսի պայմաններ որ «Թուրքիայի ժողովուրդները չձգտեն նրանից անջատուել»⁽²⁵⁾: Ասորիների ազգային խորհրդի նախագահ Բիտ Աբրամովը գտնում էր, որ Թուրքերի հետ հաշտութիւնը կը լինի վերջնական, եթէ հաշուի առնուեն եւ բաւարարուեն հայերի եւ ասորիների պահանջները: Փետրուարի 14/27-ի երրորդ նիստում մուսուլմանական կուսակցութիւնների խմբակցութեան կողմից հանդէս եկաւ Հաջինսկին: «Մուսուլմանները որոշել են Թուրքիայում Հայկական Հարցի լուծմանը՝ համաձայն հայերի ցանկութեան: Դա կարելոր է հենց Թուրքիայի եւ Թուրքերի շահերի համար եւ կովկասի համար ունի իր նշանակութիւնը: Այդ հարցի լուծումից կախուած են հայերի եւ թաթարների փոխյարաբերութիւնները: Այս տեսակէտը մուսուլմանական կուսակցութիւնները՝ կ'անցկացնեն Տրապիզոնի հաշտութեան բանակցութիւնների ժամանակ: Վերջնական հաշտութեան նախաձեռնութիւնը չպէտք է ելնի մեզանից, բայց մենք պէտք է սրբօրէն պահենք պայմանագիրը եւ չպէտք է մտածել, որ Սահմանադիր ժողովը կը փոխի այն: Նա դրան չպէտք է դիպչի եւ մենք այլ տէրեր չպէտք է ունենանք»⁽²⁶⁾:

Չնայած Հաջինսկու յայտարարութեանը եւ յանձնաժողովի որոշմանը, որ կովկասեան ժողովուրդները իրաւասու են վճռել իրենց ճակատագիրը Անդրկովկասի սահմանադիր ժողովում՝ Ուսուրբեկովը առաջ քաշեց «ի՞նչ է նշանակում «ինքնորոշում» հարցը»: «Ինքնորոշումը կարելի է ձեւակերպել այսպէս. մենք ցանկանում ենք որոշակի սահմաններ, ցանկանում ենք այնպիսի պայմաններ, որ մենք կարողանանք պաշտպանել մեր իրաւունքները»՝ պատասխանեց Խատիսեանը: Սոցիալիստ-յեղափոխական Ս. Զիկալինը եւ «Մուսուլմանները Ռուսաստանում» կուսակցութեան ներկայացուցիչ Գանինը մտավախութիւն յայտնեցին, որ

Թուրքիան այնքան ինքնուրոյն չէ, որ կարողանայ հայերի պահանջները բաւարարել: Ուսուրբեկովը առաջ քաշեց նոր հարց. ի՞նչպէս պէտք է խօսել թուրքերի հետ — որպէս յաղթողնե՞ր, թէ հաւասարներ: «Մուսուլմանների խօսքը թուրքիայում, ի հարկէ ունի հսկայական նշանակութիւն, սակայն, որպէսզի ուժ ունենանք, անհրաժեշտ է գնալ նախապէս համաձայնութեան, պատճառով որոշումով ներկայանալու համար: Մինչդեռ բոլորը չեն հաւասար վիճակում: Մէկը ունի ամբողջ բանակ, միւսը՝ ոչ մի զէնք: Մուսուլմանները, օրինակ, Շամխորից յետոյ ոչինչ չեն ստանում»⁽²⁷⁾, աւարտեց իր խօսքը Ուսուրբեկովը:

Յանձնաժողովի Փետրուարի 15-ի նիստում Պատիսեանը հանդէս եկաւ ընդարձակ զեկուցումով «Թուրքահայաստանի ինքնավարութեան մասին»․ անդրադառնալով սահմանների, տարածքի, բռնազաղթածների վերաբնակեցման, ոստիկանութեան կազմակերպման հարցերին՝ բերուեցին վիճակագրական տեղեկութիւններ, թուեր, փաստեր: Նշելով, որ Հայաստանը բաժնուած է երեք մասի՝ ռուսական, թուրքական եւ պարսկական, եւ այդ երեք մասերը հաւանաբար կը ձգտեն միաձուլման՝ Գանինը առաջ քաշեց Հայաստանի կողմնորոշման հարցը, ինչպիսի՞ն կը լինի այն՝ ռուսակա՞ն թէ թուրքական: Ուսուրբեկովին հետաքրքրում էր հայրենի վայրեր վերադառնալու դէպքում թուրքերին եւ քրդերին ցուցաբերուելիք վերաբերմունքի հարցը․ չի՞ արգելակուի արդեօք այդ ցանկութեան իրականացումը: Ի՞նչ հիմունքներով են գծուել ինքնավար Հայաստանի սահմանները, հարկաւոր չէ՞ արդեօք այդ կապակցութեամբ ունենալ բնակչութեան կարծիքը, 1914 թուի սահմանները չե՞ն գծուել արդեօք մեծ տէրութիւնների ճնշմամբ, քանի՞ տոկոս հայեր են ապրում այդ սահմաններում՝ հետաքրքրում էր Հաջինսկին:

Պատիսեանի պատասխաններն էին՝ քանի որ Կովկասը անջատուել է Ռուսաստանից՝ ապա հաւանական է, որ հայերը կ'ընտրեն իրենց համար թուրքական կողմնորոշում, եթէ, ի հարկէ, այդ գտնեն իրենց համար շահեկան: Սահմանները որոշուելու են 1914-ի սահմանումներով․ բնակչութեան կարծիքը վաղուց յայտնի է․ տէրութիւնների կողմից ճնշում գուցէ եւ եղել է, սակայն այդպէս ծնւում են բոլոր ռեֆորմները, ինչ վերաբերում է հայերի տոկոսին՝ այդ մասին տեղեկութիւններ կան Լեփսիուի⁽²⁸⁾ եւ Դեղին գրքերում⁽²⁹⁾․ քրդերը, եթէ նրանք ցանկանան վերադառնալ, իրաւունք կը ստանան⁽³⁰⁾:

Նոյն օրը՝ Փետրուարի 15/28-ին կայացած չորրորդ նիստում, հաշտութեան յանձնաժողովը ընդունեց հետեւեալ հիմնա-

դերոյթները. — 1. Ստեղծուած իրավիճակում Անդրկովկասեան Սէյմը իրաւասու է կնքել հաշտութիւն թուրքիայի հետ, 2. Սկսելով բանակցութիւններ, Անդրկովկասը խնդիր է դնում թուրքիայի հետ կնքել վերջնական հաշտութիւն, 3. Կնքուող հաշտութեան պայմանների հիմքում պէտք է դրուի Ռուսաստանի եւ թուրքիայի միջեւ 1914-ին պատերազմ յայտարարելու պահին եղած պետական սահմանների վերականգնումը, 4. Պատուիրակութիւնը ձգտում է Արեւելեան Անատոլիայի ինքնորոշման իրաւունքին, մասնաւորապէս թուրքահայաստանի ինքնորոշման՝ թուրքական պետականութեան շրջանակներում⁽³¹⁾ :

Հիմնադրոյթները հաստատուեցին Սէյմի Փետրուարի 16/ Մարտի 1-ի նիստում, որտեղ «Հաշտութեան մասին» զեկուցումով հանդէս եկաւ յանձնաժողովի նախագահ Ի. Ռամիշվիլին: Զեկուցողը յանձնաժողովի անունից հիմնաւորեց 1914-ի ոռւս-թուրքական սահմանների պահպանման անհրաժեշտութիւնը: Հակառակ դէպքում, ասում էր նա, «պետական սահմանների ամէն մի խախտում կարող է հասցնել այնպիսի բարդութիւնների, որոնց արդիւնքները իրենց զգացնել կը տան երկար տարիներ եւ ողբալի կը լինեն ինչպէս մեզ համար՝ այնպէս էլ, երեւի, թուրքիայի համար»:

Հանդէս գալով բռնադրաւումների եւ ռազմական տուգանքների դէմ՝ յանձնաժողովը վճռականօրէն պաշտպանում էր Արեւելեան Անատոլիայում բնակուող բոլոր ժողովուրդների ինքնորոշման իրաւունքը, ժողովուրդներ, որոնք տասնեակ ու հարիւրաւոր տարիներ պայքարել են իրենց ազատութեան եւ անկախութեան համար: «Եւ առաջին հարցը, որ կանգնելու է Սէյմի առաջ՝ դա Տաճկահայաստանի կարգաւորման հարցն է: Հայ ժողովրդի ինքնորոշման իրաւունքը ամրապնդուած է նրա բազմադարեան պայքարով ընդդէմ այն հարստահարման, որին այդ ժողովուրդը ենթարկուած է եղել թուրքիայի Կայսրութեան սահմաններում եւ մենք պարտական ենք ասել, որ Տաճկահայաստանի հարցը մի հարց է, որի լուծումով շահագրգռուած է ոչ միայն թուրքական Կայսրութիւնը միակողմանիօրէն, այլ անպայման այդ հարցի լուծումով ոչ նուազ չափով շահագրգռուած են նոյնպէս Անդրկովկասի ժողովուրդները»: Յանձնաժողովը գտնում էր, որ հայերը եւ ասորիները թուրքական պետութեան շրջանակներում պէտք է ունենան ինքնորոշման իրաւունք եւ ինքնավարութիւն եւ միայն այդ հարցի վերջնական լուծման դէպքում «թուրքական Կայսրութեան եւ Անդրկովկասի միջեւ կը սահմանուեն բարիդրացիական յարաբերութիւններ»⁽³²⁾ :

Հաստատուեց Տրապիզոն մեկնող հաշտութեան պատուիրակութեան կազմը, որի մէջ մտան մենչեւիկ Ա. Չխենկելին՝ նախագահ, վրացի մահմետական Գ. Արաշիճէն, վրացական ազգային դեմոկրատ Գ. Գվազաւան, սոցիալ ֆեդերալիստ Գ. Լասիւիշվիլին, Հայ Յեղափոխական Դաշնակցութեան անդամներ Յ. Քաջազնունին եւ Ալ. Խատիսեանը, Մուսավաթի, Հումմէթի, Մուսուլմանական Սոցիալիստական Բլոկի, Ռուսաստանի Մուսուլմանների ներկայացուցիչներ Մ. Հաջինսկին, Խ. Խասմամեդովը, Մ. Մեխտիեւը, Ա. Շէյխս-ու-Իսլամովը եւ Հ. Հայդարովը⁽³³⁾։ Որպէս խորհրդականներ՝ Տրապիզոն մեկնեցին Ռուբէն Տէր Մինասեանը, պատմաբան Լէոն (Բաբախանեան), եւ Կոմիսարիատի արտաքին յարաբերութիւնների դեպարտամենտի քարտուղար Միքայէլ Թումանեանը, որը պատուիրակութեան գործերի կառավարիչն էր։

Սէյմում ներկայացուած բոլոր մուսուլմանական Փրակցիաների ներկայացուցիչներին պատուիրակութեան կազմում ընդգրկելը վճռականօրէն պնդեց Հաջինսկին՝ պատճառաբանելով որ Մուսավաթը չի կարող իր վրայ վերցնել ամբողջ պատասխանատուութիւնը. «ներկայացուցչութիւնը հանդիսանում է ազգային եւ այդ պատճառով ծայրայեղ կարեւոր է, որ մուսուլմանները ներկայացուեն ամբողջութեամբ։ Մուսավաթի միակ նպատակն է բանակցութիւններում հասնել առաւել յաջող արդիւնքի։ ... Անդըրկովկասում բնակուող եւ հաշտութիւն կնքող երեք ազգութիւնները Թուրքիայում ունեն իրենց ազգակիցները, սակայն այդ ձեւական տեսակէտը պէտք է դէն նետել։ Մուսուլմաններին տրուում է պատասխանատու դեր եւ դրա հետ առաջարկուում է ուղարկել միայն Մուսավաթի եւ Սոցիալիստական Բլոկի ներկայացուցիչներին։ Ի զուր բն մտածում, թէ մեզ մօտ կան տարաձայնութիւններ հաշտութեան հարցում։ Դա չկայ։ Սակայն մի բան է համաձայնութիւն այստեղ, այլ բան է մեզ ուղարկող մասսաների տրամադրութիւնը. որպէսզի եւ այդ մասսաները ձուլուեն մէկ ամբողջութեան մէջ՝ հարկաւոր է որ նրանք իմանան, որ զրկուած չեն ձայնից»։ Հաջինսկուն պաշտպանեց Ա. Պեպինովը՝ ներկայացնելով մուսուլմանական բոլոր Փրակցիաների պահանջը իրենց ներկայացուցիչներին Տրապիզոն ուղարկելու մասին⁽³⁴⁾։ Ձգացուեց մուսուլմանների «արեան կանչը», որը Մուսավաթ կուսակցութիւնը հնչեցրել էր 1917 թուի Հոկտեմբերին կայացած միաւորիչ համագումարում։

Համագումարում ընդունուած ծրագիրը կոչ էր ուղղուած բոլոր մուսուլմաններին՝ «Իսլամի երբեմնի ազնուածին ժողովրդին», «աշխարհի այնպիսի մասերի՝ ինչպիսիք են Ասիան, Եւրո-

պան, Աֆրիկան տիրողներին», «մուսուլմանական աշխարհի բոլոր անջատուած ուժերին», եւ «անկախ ազգութիւնների եւ կրօնական տարբերութիւնների՝ միաւորուել՝ պաշտպանելու մուսուլմանների ազգային եւ մարդկային շահերը, նրան վերադարձնել այն փառքը եւ կրօնը, որ նա քարոզում է»: Ծանուցելով որ «Թուրք ժողովրդի նպատակը հանդիսանում է առաջադիմութիւնը եւ ճրգտումը, որպէսզի մարդկութեան ծաղկած այգում ծաղկի թուրքական բուրաւէտ ծաղիկը եւ այդ ծաղիկը մուսուլմանական ինտերնացիոնալի մէջի խմբերի հետ կազմի մի ընդհանուր փունջ»⁽³⁵⁾: Զգտելով համաձայնեցնել համաթուրքական եւ համախալամական գաղափարախօսութիւնները, նպաստել միասնական թուրքական պետութեան ստեղծմանը եւ միւս մուսուլմանական պետութիւնների հետ նրա դաշինքին՝ Մուսավաթի հիմնադիր Ռասուլ Զադէն միաւորիչ համագումարում յայտարարեց, թէ «Թուրքութեան գաղափարը չի հանդիսանում ոտնձգութիւն ուրիշների նկատմամբ եւ ոչ էլ իսլամի ժխտում: Թուրքերը հանդիսանում են մէկ ընդհանուր ազգ»⁽³⁶⁾: Այդ գինանոցից զինուած եւ քաղաքական խրնդիրների ընդհանրութիւնից մղուած՝ 1994 թուի Փետրուարի 8-ին Անկարայում Ադրբեջանի ղեկավար Հէյդար Ալիեւը Թուրքիան եւ Ադրբեջանը բնորոշեց որպէս «երկու պետութիւն՝ մէկ ժողովուրդ»: «Երկու պետութիւն՝ մէկ ազգ», — ամրապնդեց Թուրքիայի նախագահ Դեմիրէլը:

Մուսավաթի միաւորիչ համագումարը որդեգրեց պետութեան ֆեդերատիւ կառուցուածքի գաղափարը՝ իր մէջ ներառնելով Ղրիմը, Կովկասը, Դաղստանը, Թուրքեստանը, եւ Բաշկիրիան: Դրուեց Ասորպատականի տարածքային ինքնավարութեան հարցը, Ասորպատական ասելով՝ հասկանալով ոչ թէ Արաքսից հարաւ գտնուող պարսկական երկրամասը, այլ Բաքուի, Ելիզաւետպոլի, Երեւանի նահանգները, եւ ընդհանրապէս Արեւելեան եւ Հարաւային Կովկասները: Պահը համարելով նպաստաւոր՝ նա միաձուլման կոչով դիմեց նաեւ Կարսի եւ Արդահանի մահմեդականներին⁽³⁷⁾:

Տրապիզոն մեկնող Անդրկովկասեան Սէյմի Հաշտութեան Պատուիրակութիւնում մուսուլմանական մեծամասնութեան ճրգտելու միտումների դրդապատճառները բացայայտուեցին Սէյմի եւ Կոմիսարիատի Հաշտութեան յանձնաժողովների համատեղ նիստում՝ Փետրուարի 17/Մարտի 2-ին, երբ քննարկուում էր Բըրեստ-Լիտովսկում Խորհրդային Ռուսաստանի Պատուիրակութեան քարտուղար Լեոն Կարախանից (Կարախանեան) ստացուած հեռագիրը Փետրուարի 18/Մարտի 3-ին Բրեստում կնքուելիք պայ-

մանագրի մասին: Յայտնի դարձաւ Արեւմտեան Հայաստանի՝ պատերազմի օրէնքներով թուրքիայից գրաւուած Հայկական պապենական հողերի, «արեւելեան անատոլիական գաւառներ» ձեւակերպումով հոգեւարքի հասած Օսմանեան Կայսրութեանը յանձնելու, Կարսի, Արդահանի, Բաթումի մարզերից ուսական զօրքերը դուրս բերելու պայմանաւորուածութեան մասին⁽³⁸⁾: Այդ դառն իրականութիւնը կովկասեան ճակատում յաղթանակի հասած Ռուսաստանի կապիտուլացիան էր ոչ միայն գերմանական իմպերիալիզմի, այլեւ թուրքական օսմանիզմի առաջ: Դրանով Հայ ժողովուրդը անօգնական կանգնում էր թուրքական բիրտ ուժի դէմ ճակատ առ ճակատ:

Սէյմի մուսուլման անդամները անմիջապէս դրեցին Անդերկովկասը ազատ եւ անկախ յայտարարելու հարցը: «Մինչեւ արմատական հարցը՝ մեր պատկանելիութեան հարցը չվճռուի՝ մենք ոչ մի արդիւնքի չենք հասնի»⁽³⁹⁾՝ յայտարարեց իսսամաֆեդովը: Խ. Բ. Մելիք-Ասլանովի կարծիքն էր՝ «այսօր պէտք է որոշել անջատման հարցը եւ ազատուելով՝ այդ ժամանակ մենք կը հրաժարուենք ճանաչել Բրեստի պայմանագիրը»⁽⁴⁰⁾: «Ռուսաստանից մենք հեռանալ չէինք ցանկանայ, սակայն իրադրութիւնը պահանջում է դնել անկախութեան հարցը»: «Մուսուլմանների կողմից երաշխիքի հարցը աւելի լուրջ է: Մենք հայերի տրամադրութիւնները զիտենք, բայց վերջնականապէս ասել ինչպէս ազգը կը մօտենայ՝ չենք կարող: Մեր հասարակայնութիւնը թոյլ է զարգացած, տարբեր ազգութիւնների միջեւ միութիւն չի ստեղծուած եւ մասսաների համար երաշխաւորել չենք կարող»⁽⁴¹⁾՝ յայտարարեց Տ. Հայդարովը: Շէյխ-ուլ-Իսլամովը գտնում էր, որ Բրեստի պայմանները պէտք է զիտել որպէս թուրքիայից մեր պատուիրակութեանը արուած առաջարկութիւն: Պատուիրակութիւնը պէտք է մեկնի Տրապիզոն՝ «դրանով ընդգծելով, որ մենք վաղուց նրանց հետ բանակցութիւնների մէջ ենք»⁽⁴²⁾:

Հաջինսկին առաջարկել էր յայտնել թուրքիային Անդրկովկասի Սէյմի կողմից Բրեստի հաշտութիւնը չընդունելու եւ Անդրկովկասը անկախ յայտարարելու մասին, հռչակել այդ անկախութիւնը եւ յետոյ բանակցութիւնների մէջ մտնել: Հայկական հողերի բռնակցումը թուրքիային եւ Անդրկովկասի անկախութիւնը համարելով արդէն կատարուած փաստ, Մուսավաթի ներկայացուցիչը հանդէս եկաւ երիտասարդ-թուրքերի մտքերի հաղորդումի դերում: «Այսօրուայ ընթացքում տեղի է ունեցել հրակայական կարեւորութիւն ունեցող իրադարձութիւն. դեռ երէկ Արդահանը, Բաթումը եւ Կարսը մեր ձեռքերում էին, այսօր թուր-

քերն ունեն նրանց նկատմամբ հսկայական իրաւունքներ: Երէկ մենք պէտք է խօսէինք մէկ լեզուով, այսօր ուրիշ լեզուով. երէկ կարող էր խօսք լինել մեր փոխհատուցումների մասին, այսօր՝ ուրիշ: Ո՞վ կարող է հաստատել, որ թուրքերը կը հրաժարուեն ձեռք բերածից: Ոչ մի հիմք չկայ մտածելու, որ թուրքերը կամովին կը հրաժարուեն նրանից ինչ ստացել են Բրեստ-Լիտովսկի պայմաններով»: Նրա կարծիքով, որպէսզի թուրքերը հրաժարուէին իրենց իրաւունքներից՝ պէտք էր ինչ որ բան ստանային եւ Անդրկովկասի անկախութեան պաշտօնական հռչակումը թուրքերի համար կը հանդիսանար շահեկան փոխհատուցում, եւ այն ժամանակ թուրքիւն կը լինէր հարեւան ոչ թէ Ռուսաստանի՝ այլ Անդրկովկասի հետ, իսկ դրանք տարբեր բաներ են: Մէկ այլ բացայայտում. «Թաթարներին ազգակից թուրքիւն հաշտութեան պայմանագրով մտածում է իւրացնել Կարսը, Արդահանը, Բաթումը, եւ Կոմիսարիատում նստած թաթարական ներկայացուցիչները չեն կարող գնալ հակառակ թուրքական պլաններին, դա չի բաւարարի մասսաներին: Եւ եթէ մուսուլմաններին ոչինչ չտուած նաեւ խանական մասսան մեզ չի լսի: Մասսաներին պէտք է տալ փոխհատուցում եւ դա անկախութիւնն է», — յայտարարեց Հաջինսկին: Մէկ խոստովանութիւն եւս. «մենք, մուսուլման պատգամաւորներս, խօսում ենք թուրքահայաստանի մասին ոչ թէ նրա համար որ հաճելի լինի մեր հարեւան հայերին՝ այլ ելնելով մեր սեփական շահերից»: Արշակ Զուրաբեանի հարցին թէ ի՞նչ կոնկրետ միջոցառումներ կը բաւարարէին մուսուլմաններին՝ Հաջինսկին պատասխանեց. նախ՝ անկախութիւն, ապա՝ մուսուլմանական կորպուսի ճիշդ կազմակերպում: Օգտագործելով պահը՝ Հաջինսկին փաստօրէն փոխհատուցում պահանջեց ոչ միայն թուրքերի՝ այլեւ Կովկասի մուսուլմանների համար: Նա բողոքեց, որ մուսուլմանների նկատմամբ վերաբերմունքը արդարացի չէր, պարբերաբար արգելակուել էր մուսուլմանական կորպուսի կազմակերպումը, եւ նրանք չըջանցուել էին ոռոսական զօրքի եղած գոյքի բաժանման ժամանակ⁽⁴³⁾:

Այլ մօտեցում էր դրսեւորուում յանձնաժողովների հայ եւ վրացի անդամների մօտ: «Մենք կարող ենք խօսել որպէս Ռուսաստանից փաստօրէն կտրուած եւ հաշտութիւն կնքելու իրաւունք ունեցող երկիր, բայց ապագայում, երբ կը վերսկսուի կապը Ռուսաստանի հետ՝ մենք կը դնենք կապի վերականգնման պայման՝ կնքուած պայմանագրի պահպանում»⁽⁴⁴⁾, յայտարարեց Յովհաննէս Քաջազնունին: «Քանի որ կնքուած է պայմանագիր՝ Տրապիզոն գնալու կարիք չկայ: Մեր պատասխանը պէտք է որոշենք եւ ու-

ղարկենք Բրեստ: Եթէ մենք, մնալով Ռուսաստանի մի մաս, չենք ընդունում պայմանագիրը՝ մեզ կ'ընդունեն իբրեւ խոռվարար»՝ խորհում էր Նոյ Ժորդանիան: Նրա կարծիքով՝ հարցին պէտք էր մօտենալ ոչ թէ ձեւական՝ այլ շահի տեսակէտից. «Դեռ պէտք է ապացուցել, որ անջատումը մեզ օգուտ է: Կովկասի բնակչութեան մեծ մասը մուսուլմաններ են: Եթէ մուսուլմանութեան ներկայացուցիչները երաշխաւորում են, որ յայտարարելով իրենց անկախ՝ չեն սխալում եւ մեզ հետ կը գնան համաքայլ՝ դա մեզ մեր երկրի ներսում կը տայ մեծ ուժ: Եթէ մուսուլմաններն այդ երաշխիքները չտան եւ միւս կողմից Ռուսաստանը լինի մեր դէմ՝ անկախութեան յայտարարութիւնը մեզ համար կարող է լինել կործանարար»⁽⁴⁵⁾:

Համարելով, որ Անդրկովկասի կառավարութիւնը թուրքերի պատասխանի բացակայութիւնը գտնում է կապի մէջ Բրեստի պայմանների հետ՝ Ե. Գեգեչկորին Կովկասի հաշտւին բուլլետիկների հետ թուրքական կառավարութեան հաշտութիւն կնքելու մէջ նկատեց թուրքերի ցանկութիւնը՝ նաեւ հակառակ իրենց իսկ նախաձեռնութեամբ սկսուած բանակցութիւններին, Անդրկովկասը կապել Բրեստի հաշտութեամբ⁽⁴⁶⁾:

Կովկասը պէտք է գնար նրանց հետ՝ ով որ նրան կը տար 1914 թուի սահմանները՝ գտնում էր Մ. Արզումանեանը. «Եթէ մուսուլմանները կ'ասեն, որ իրենք մեզ կը պաշտպանեն՝ մենք կը լինենք ուժեղ: Հարցը պէտք է զնել շահերի առումով եւ մենք պէտք է առաջնորդուենք շահերով եւ ոչ թէ զգացմունքներով»⁽⁴⁷⁾:

Չհամաձայնութիւնով յանձնաժողովի մուսուլման անդամների հարցադրումների հետ՝ Ի. Ռամիշվիլին ասաց. հիմա յանկարծ պարզւում է, որ մենք չգիտենք նրանց տրամադրութիւնը, ում ներկայացնում ենք: Բաթումի բռնակցումը թուրքիային նշանակում է Անդրկովկասը վերածել Սերբիայի. «Երբ ասում են, Բաթումում մուսուլմաններ են, իսկ թուրքիայում նրանց ազգակիցները, ապա բոլոր մուսուլմաններն էլ կարող են ասել, որ Անդրկովկասում նրանք մեծամասնութիւն են եւ կը պահանջեն միաւորուել թուրքիայի հետ: Հիմա հասել է մեր հայեցակէտը յստակ եւ որոշակի արտայայտելու պահը, — յայտարարեց Ռամիշվիլին, — այստեղ կարեւոր է ոչ թէ ի՞նչ է մտածում բնակչութիւնը՝ այլ այն թէ ինչպէ՞ս են կարծում քաղաքական կուսակցութիւնները»⁽⁴⁸⁾:

Առարկելով թուրքական շահերը սատարող մուսուլմանական գործիչներին, որոնք պնդում էին որպէս սահմանների պաշտպանութեան պայման Անդրկովկասի անկախութեան հռչակումը՝

Ա. Նատիսեանն ասաց. «ես չունեմ վստահութիւն մուսուլմանական ներկայացուցիչների խօսքերի նկատմամբ, երբ վերջիններս ասում են՝ «կառավարութիւնը մէկ բան է, իսկ ժողովուրդը՝ այլ բան»: Մուսուլմանական ղեկավարները միշտ իրենք են ասել եւ մենք սովոր ենք հաւատալ դրան, որ բաւական է մէկ խօսք, որպէսզի մասսան անի այն, ինչ նրանք կը հրամայեն: Այժմ, յանկարծ, նոյն ղեկավարները ասում են, որ իշխանութիւն չունեն եւ զրկուած են ժողովրդի վրայ ազդեցութիւնից: Հետեւութիւնն այն է, որ մուսուլմանական մասսաները կա'մ ունեն այլ ղեկավարներ, կամ ներկայ ներկայացուցիչները չեն գիտակցում իրենց իշխանութիւնը»: Յայտարարելով, որ առանց Բաթումի Անդրկովկասը, եւ յատկապէս Վրաստանը, չի կարող մնալ, իսկ հայերը ամէն կերպ կը պաշտպանեն Կարսը՝ Նատիսեանը պահանջեց մուսուլման պատգամաւորներից յստակօրէն ասել «ովքե՞ր են այն ներկայացուցիչները, որոնք հանդիսանում են մուսուլմանական մասսաների իսկական ղեկավարները. թող այդ ներկայացուցիչները մտնեն իշխանութեան մարմինների մէջ եւ մենք կ'ունենանք խօսակցութիւն նրանց հետ, ոչ թէ նրանց հետ, ովքեր ասում են իշխանութիւն չունենք մասսաների վրայ»: Նատիսեանը հարցը դրեց բացայայտ եւ կտրուկ. «եթէ դուք ազդեցութիւն չունէք մուսուլմանական մասսաների վրայ եւ ձեր ետեւից զալիս է մուսուլմանութեան մէկ տասներորդը՝ մենք այդպէս էլ պէտք է իմանանք, որ մենք ունենք երկու ճակատ. կամ ասէք, որ պատասխանատու չէք նրանց համար, ովքեր այսօր գործում են թուրքական գլխաւոր շտաբի պլանով, այդ դէպքում մենք նրանց կը յայտարարենք դաւաճաններ, կամ եղէք մեզ հետ: Մենք պէտք է յստակ իմանանք, թէ ո՞վ է մեր թշնամին»⁽⁴⁹⁾:

Սէյմի եւ կառավարութեան հայ եւ վրացի անդամների նման հարցադրումներից յետոյ էլ մուսուլմանական կողմը մնաց հաւատարիմ իր որդեգրած ուխտին: «Թաթարական բնակչութեան շրջանում առաջացել է շարժում, որը մենք, ղեկավարներս, կանգնեցնելու ուժ չունենք: Մուսուլմաններն իրենց համարում են շրջանցուած եւ մասսաներին հանգստացնելու միակ միջոցը մուսուլմանական կորպուսի կազմակերպումն է, ռուսական զօրքերի թողած գինամթերքից մաս հանելը», — Հաջինսկուց յետոյ պնդում էր Ջաֆարովը: Չթխտելով երկու ճակատի առկայութիւնը՝ նա շրջանցելով փաստերը, այն վերագրեց Երեւանի նահանգում հայերի եւ մուսուլմանների պարբերաբար ընդհարումներին, «հայկական զօրամասերի էքսցեսներին, որից տուժում է մուսուլման բնակչութիւնը»⁽⁵⁰⁾:

Մուսուլման պատգամաւորներին հարցադրումների պատճառները պարզուրում են Բաքուից Գերմանիա մեկնած աւագ լէյտենանտ Դեզիդոր Բրանդենի 1918-ի Յունուար 24-ի զեկուցագրից: «Թուրքական սպաները Մուսուլմանական Ազգային Կոմիտէի հետ աշխատում են Արեւելեան Կովկասում մահմեդական պետութիւն ստեղծելու ուղղութեամբ: Բաքուում ազգային կառավարութիւն կազմելու ճանապարհին ծառանում է այն բարդութիւնը, որ մահմեդականները Ռուսաստանում զինապարտ չեն եւ այդ պատճառով չունեն զէնք եւ ռազմական կազմակերպութիւն: Հայկական զօրքերի դէմ հանդէս գալու համար բանակը զէնքի կարիք ունի: Այդ առումով՝ Մուսուլմանական Կոմիտէն ստանում է թուրքերի եւ կենտրոնական իշխանութիւնների աջակցութիւնը՝ զէնքով եւ դրամով»⁽⁵¹⁾: Իսկ Ազգային Խորհրդի անդամները Սէյմում եւ Կոմիսարիատում ներկայացուած նոյն մուսուլմանական գործիչներն էին, որոնք ջանք չէին խնայում Կովկասում համաթրքութեան քարոզչութեան խորացման, մուսուլմանների զինման, հակահայկական եւ հակառուսական խժոժութիւններ կազմակերպելու համար: Այդ նպատակով Գերմանիայից, Թուրքիայից եւ այլ աղբիւրներից հոսում էր հսկայական գումար. զէնքի ձեռք բերումը դարձել էր ազգային մոլուցք: Այդ հանգամանքը իր արտայայտութիւնն էր գտնում Փրանսիական, աւստրո-հունգարական, անգլիական հետախուզութեան զեկուցագրերում: Մուսուլմանական ապստամբութիւն բարձրացնելու պլանների մասին Վիեննա՝ կոմս Օտտակար Չերնիին Բադէնից 1918-ի Յունուարի 4-ին հեռագրով յայտնում էր աւստրո-հունգարական բանակի գլխաւոր հրամանատարութեան առնթեր արտաքին գործերի նախարարութեան ներկայացուցիչը⁽⁵²⁾: Կոստանդնուպոլսում Աւստրո-Հունգարիայի դեսպան Պալլաւիչինին 1918-ի Փետրուարի 8-ին յայտնում էր Բուդապէշտ, թէ «էնվէր փաշան երէկ ասաց կայսերական եւ թագաւորական զինուորական կցորդին, որ «թուրքական կողմից սպասւում է ապստամբութիւն Ռուսաստանի Կովկասեան մարզերում»»⁽⁵³⁾: Բաքուում, Ստաւրոպոլում, Պետրովսկում թուրքական գործակալների գործունէութեան մասին Լոնդոնից Փարիզ Յունուարի 14-ին զեկուցում էր Անգլիայում Ֆրանսիայի զինուորական կցորդ գեներալ դը Պանուսը⁽⁵⁴⁾:

Կովկասի հարցում թուրքական նկրտումները յայտնի էին հասարակայնութեանը եւ իշխանութիւններին: «Անդրկովկասի ճակատագիրը դեռ որոշուած չէ եւ այն չպէտք է որոշուի թուրքական ախորժակների մասշտաբով, — գրում էր վրացական սոցիալ դեմոկրատների էրթորթ թերթը, — 1878 թուի սահմանների վե-

րականգնումը նրանց հնարաւորութիւն կը տայ թուրքական դրօշները հասցնել ընդհուպ մինչեւ Կովկասեան լեռները, սպառնալ Անդրկովկասի ամբողջականութեանը, բնակչութեան ֆիզիքական գոյութեանը, [եւ] նպաստել համապատասխան ազգային իդէալի իրականացմանը»⁽⁵⁵⁾ :

Հանդէս գալով յօգուտ 1914 թուի սահմանների պահպանման՝ Կովկասկոյէ-Սովո թերթը գրում էր. «Ներկայացնելով թուրքահայաստանի ինքնավարութեան պահանջ՝ մենք ասում ենք, որ թուրքական ստրկութիւնից ազատագրուած երկիրը յետ չտրուի ստրկութեան, այլ վերագարձուի իր իսկական տէրերին՝ հայերին: Այդ իրաւունքը հայ ժողովուրդը ձեռք է բերել հազարաւոր մարդկանց արեամբ, շատ թանկ գնով, եւ մենք իրաւունք չունենք թուրքահայաստանից թեթեւ սրտով հրաժարուել, ինչպէս մի ինչ որ աննշան թեթեւօլիկ կարգախօսից: Եթէ մենք նոյնիսկ հաշուի չառնենք ազատութեան համար դարաւոր պայքարը եւ բոլոր նահատակներին, եւ վերցնենք միայն վերջին չորս տարիներին Հայաստանի լեռներում ու դաշտավայրերում, Միջագետքի ճանապարհին զոհուած, Արաքսի, Եփրատի ջրերում, Սեւ Ծովում խեղդամահ արուած զոհերին, աւերուած քաղաքները, Մուշի, Խնուսի, Հասան-Կալայի, Էրզրումի, Տրապիզոնի, Բաբերդի, Երզնկայի անապատի վերածուած հայկական թաղամասերը, հայ լինելու համար թուրքահայաստանի բռնադատուած բնակչութեանը, պէտք է, որ այդ բազմաչարչար, անբախտ երկիրը ստանայ ինքնավարութիւն: Այդ պարտաւորեցնում է զոհուածների յիշատակը, ինչպէս եւ ողջերի պահանջը: Հայաստանի ազատագրութեան համար զոհուել են հարիւր հազարաւոր կեանքեր եւ մենք իրաւունք չունենք խաչ քաշել այդ հաշուի վրայ»⁽⁵⁶⁾ :

«Հումանիզմ եւ քաղաքակրթութիւն» կարգախօսով հայկական հոդերը ներխուժած թուրքական զօրքերի առաջխաղացման պայմաններում Անդրկովկասի Սէյմի պատուիրակութիւնը Փետրուարի 23/Մարտի 6-ին ժամանեց թուրքերի կողմից արդէն գրաւուած Տրապիզոն: Տեղական վալիի կարգադրութեամբ հաշտութեան պատուիրակութեանը Կառլ Թագաւոր յաժանաւից ափ իջնել չթոյլատրուեց: Արձանագրելով իրադրութիւնը՝ Ալ. Խատիսեանը պատուիրակութեան Փետրուարի 24/Մարտի 7-ի նիւտում դրեց պատուիրակութեան անկախ գործունէութեան ապահովման եւ Անդրկովկասի տարածք վերադառնալու հարցը: Նա գտնում էր, որ քաղաքում թուրքական զօրքերի ցուցադրական քայլերը եւ տեղաշարժերը, «բանակցութիւնների միջնորդութեամբ կ'ազդեն նրա բովանդակութեան վրայ»: Ժամանակից շուտ առաջարկութիւններ

չպէտք է անել, պէտք է սպասել Թուրքական Պատուիրակութեան ժամանելուն, ասաց Հայդարովը, պէտք է օգտուել Թուրքերի «հիւրընկալութիւնից»՝ Տրապիզոնը համարելով չէզոք քաղաք: Արդարացնելով Թուրքերի գործողութիւնները՝ խոստամեղովը այն բացատրեց մոսկովման բնակչութեան նկատմամբ նահանջող զօրքերի կամայականութիւններով, հանգամանք՝ որ «Թուրքերին իրաւունք է տալիս շարժուել առաջ՝ կամայականութիւններին վերջ տալու համար»: Զխենկելին հեռագրեց Կոստանդնուպոլիս՝ պատուիրակութեան Տրապիզոն ժամանելուն եւ Թուրքական Պատուիրակութեան չժամանելուն մասին⁽⁵⁷⁾:

Պատուիրակութեան Տրապիզոն ուղարկելու փոխարէն՝ Օսմանեան կառավարութիւնը, ի դէմս էնվէր փաշայի, Փետրուարի 25/Մարտի 8-ի հեռագրով Անդրկովկասի կառավարութիւնից պահանջեց անյապաղ էւակուացնել Բաթումը, Արդահանը, Կարսը⁽⁵⁸⁾: «Խեղճ» մոսկովմաններին հայերի «գազանութիւններից» փրկելու համար Վեհիբ Փաշան հրամայեց «որքան հնարաւոր է արագ ձեռնարկել այդ շրջանների ազատագրումը»⁽⁵⁹⁾:

Իրադրութեան եւ ստացուած հեռագրերի մասին զեկուցւեց Անդրկովկասի Սէյմի Փետրուարի 25 եւ 26/Մարտի 10 եւ 11-ի նիստերում: Թուրքական կառավարութեան բռնակցման քաղաքականութիւնը պաշտպանելու առիթը բաց չթողեց իման խոյսկին: «Ինչ վերաբերում է Թուրքական կառավարութեան վարքագծին, — ասաց նա, — ապա նրանում մենք տեսել ենք տրամաբանական հետեւողականութիւն: Թուրքական կառավարութիւնը բազմիցս դիմել է մեզ որպէս ինքնուրոյն միաւոր եւ պնդել այդ գաղափարի ընդունումը մեր կողմից: Թուրքական կառավարութիւնը առաջարկել է իր պատուիրակութիւնը ուղարկել Բրեստ-Լիտովսկի խաղաղութեան կոնֆերանս՝ ինքնուրոյն բանակցութիւններ վարելու համար: Անդրկովկասեան կառավարութիւնը տարբեր պատճառներով այն հնարաւոր չհամարեց: Թուրքական կառավարութիւնը բազմիցս դիմել է Անդրկովկասի կառավարութեանը՝ շեշտելով նրա անկախութիւնը: Դրան մենք որոշակի պատասխան չենք տուել: Մենք այդ հարցին չենք տուել որոշակի պատասխան եւ Սէյմի նախորդ նիստում, երբ այդ հարցը յստակ եւ կատեգորիկ դրուել է մեր առաջ: Այդ պատճառով, երբ այսօր, Թուրքական կառավարութիւնը դիտելով մեզ որպէս ռուսական հանրապետութեան մաս՝ առաջարկում է կատարել հաշտութեան պայմանները, որոնք կնքուել են ռուսական հանրապետութեան կողմից, ապա զրանում չի կարելի չտեսնել տրամաբանական հետեւողականութիւն»:

Առարկելով Սէյմի անդամներին, ընդհանուր ուժերով երկրամասի սահմանները պաշտ-

պանելու հարցում, իման խոյսկին այն համարեց որպէս «միջազգային անտակտութիւն»։ Պահը համարելով նպաստաւոր՝ նա անհրաժեշտ համարեց ընդունելու թուրքերի առաջարկութիւնը Անդրրկովկասի անկախութեան մասին⁽⁶⁰⁾։

Այնուամենայնիւ, Սէյմը, գտնելով որ Անդրրկովկասի եւ նրա սահմանների վերաբերեալ իւրաքանչիւր պայմանագիր, կնքուած՝ առանց ինքնուրոյն Անդրրկովկասեան համաձայնութեան եւ գիտութեան համարում է միջազգային նշանակութիւնից զուրկ եւ Անդրրկովկասի համար պարտագիր ուժ չունեցող՝ դիմեց թուրքական իշխանութիւններին՝ «չտապ յայտնել թէ պէ՞տք է դիտել արդեօք Արդահանի, Կարսի եւ Բաթումի մարզերի էւակուացիայի մասին առաջարկը որպէս թուրքական կառավարութեան եւ Անդրրկովկասեան կառավարութեան միջեւ խաղաղութեան բանակցութիւնների շարունակման չցանկանալ»⁽⁶¹⁾։ Հաստատուեց, որ «Անդրրկովկասը պատրաստ է վարել ինքնուրոյն բանակցութիւններ թուրքերի հետ»⁽⁶²⁾։

Օսմանեան Կայսրութեան կառավարութեան հաշտութեան պատուիրակութեան անդամները, հիմնականում զինուորականներ, Տրապիզոն ժամանեցին Փետրուարի 27/Մարտի 12-ին Թուրքիայի ռազմածովային ուժերի սպայակոյտի պետ փոխ ծովակալ Ռաուֆ Բէյի ղեկավարութեամբ։ Նոյն օրը կայացան պատուիրակութիւնների ներկայացուցիչների փոխադարձ այցելութիւնները եւ պատուիրակութեան նախագահների հանդիպումները։ Առաջին իսկ օրը, ապա պատուիրակութիւնների վեց բանակցութիւններում, մասնաւոր հանդիպումներում եւ խորհրդակցութիւններում ակնյայտ դարձան Օսմանեան Թուրքիայի զաւթողական նկրտումները, Թուրքիայի Պատուիրակութեան անդամների չողոքորթութիւնը, խուսանաւելը, հաճոյախօսութեամբ եւ պերճախօսութեամբ իրենց նպատակներին հասնելու միտումները։

Առաջին իսկ հանդիպման՝ Ռաուֆ Բէյը դիմեց Անդրրկովկասեան պատուիրակութեանը ոչ որպէս պետութիւն ներկայացնող պատուիրակութիւն, այլ որպէս «Թուրքական Կայսրութեան գիրկը վերադարձած ժողովուրդների» ներկայացուցիչների։ Իր եւ իր գործընկերների անունից «բարեկամաբար եւ վստահութեամբ» բանաւոր յայտնեց Օսմանեան Կայսրութեան կառավարութեան ցանկութիւնը կնքել եղբայրական եւ երկարատեւ հաշտութիւն Անդրրկովկասի հետ։ «Մեր բարեկամութեան շնորհիւ կը լինենք հանգիստ՝ ապագայի համար։ Թաքնուած ցանկութիւններ մենք չունենք։ Հաշտութիւնը հաւասարապէս ցանկալի է երկու կողմի համար էլ։ Այսքան վէրքերից յետոյ պէտք է սկսուի ապաքինու-

մը: Մենք ունենք հաստատ նպատակ գալ ձեզ ընդառաջ. ոչինչ չկայ մեզ անջատող: Սակայն չպէտք է տալ մեր մերձեցմանը մեծ հրապարակայնութիւն: Որպէսզի այն ժողովուրդները, որոնց շահերն են խանգարելու մեր մերձեցմանը՝ մեզ չխանգարեն»՝ յայտարարեց Օսմանեան պատուիրակութեան ղեկավարը, ընդգծելով որ այդ հաշտութիւնը կը հանդիսանայ երաշխիք «Արեւելքի ընդհանուր բարօրութեան համար»:

Ա. Զիսենկելու հարցադրմանը թուրքական Պատուիրակութեան լիազօրութիւնների մասին՝ Ռաուֆ բէյը աներկբայօրէն պատասխանեց, որ թուրքերը ունեն հաստատ մտադրութիւն գնալ ընդառաջ Անդրկովկասեան կառավարութեանը, պատուիրակութիւնը ունի բոլոր լիազօրութիւններն ու ցանկութիւնները քըննարկելու բոլոր հարցերը, որոնք կ'առաջադրուեն Անդրկովկասի կառավարութեան կողմից», կնքել հաշտութիւն եւ բարեկամութիւն: Ռաուֆ բէյը ժխտեց Օսմանեան Պատուիրակութեան տեղեակ լինելը Վեհիբ փաշայի հեռագրի մասին՝ Կարսը, Արդահանը, Բաթումը էւակուացնելու վերաբերեալ, խուսափեց պատասխանել՝ նշանակո՞ւմ է արդեօք դա բանակցութիւններ չվարելու ցանկութիւն: Հաստատեց. մենք Տրապիզոն եկել ենք հաշտութիւն կնքելու, մեր պատասխանը պաշտօնական է⁽⁶³⁾: Այսպէս՝ եւ պատուիրակութիւնների ղեկավարների երկրորդ հանդիպման ժամանակ՝ Փետրուարի 28/Մարտ 13-ին⁽⁶⁴⁾:

Պատուիրակութիւնների առաջին համատեղ նիստի օրակարգի քննարկման ժամանակ Անդրկովկասեան պատուիրակութեան՝ Փետրուարի 28/Մարտի 13-ի նիստում թուրքական կողմի մտքերի արտայայտչի դերում հանդէս եկաւ Հայդարովը: Առարկելով Գվազափային, որն առաջ էր քաշում Անդրկովկասի սահմաններում ժողովուրդների ինքնորոշման իրաւունքի կարգախօսը եւ սահմանների անձեռնմխելիութեան հարցը, մասնաւորապէս Կարսի, Արդահանի եւ Բաթումի նկատմամբ թուրքական ակնկալութիւնների անհիմն լինելը՝ Հայդարովը զարգացրեց «միտք» որ այդ կարգախօսի պաշտպանութեամբ կարող է դրսեւորուել «մեր հաշտութեան պատուիրակութեան թուլութիւնը»: «Ես չեմ պատկերացնում Անդրկովկասի ազգաբնակչութեանը անշարժ քարացած սահմաններում: Սահմանները կարող են փոխուել, կախուած շատ պայմաններից եւ այդ պատճառով խօսել պետական սահմանների անխախտելիութեան մասին, ինչպէս նաեւ Անդրկովկասի սահմաններում ժողովրդի ինքնորոշման մասին, թուրքական կառավարութեան կողմից՝ տրամաբանական հետեւողականութեամբ կարող է ծագել հարց՝ թէ ինչո՞ւ Անդրկովկասի Սէյմի Հաշտու-

թեան Պատուիրակութեան անդամները չեն կարծում, որ Անդրկովկասի ժողովուրդների մօտ ինֆնորոշման միտում կարող է դրսևորուել թուրքական կայսրութեան սահմաններում եւ այդպիսով Օսմանեան Կայսրութեան կողմից այդպիսի հարցադրումը չի կարող թուալ գուրկ իրական մտքից եւ բովանդակութիւնից»^(64բ) :

Պատուիրակութիւնների առաջին պաշտօնական նիստում, Մարտի 1/14-ին, գրաւոր դեկլարացիայում Ռաուֆ բէյը հաւաստեց Օսմանեան կառավարութեան անկեղծ ցանկութիւնը հաստատելու բարիդրացիական յարաբերութիւններ «Անդրկովկասում կազմաւորման ընթացքում գտնուող հանրապետութեան հետ»։ Թուրքական Պատուիրակութիւնը խնդրում էր Անդրկովկասեան Պատուիրակութեանը անել ստոյգ յայտարարութիւն Անդրկովկասեան Հանրապետութեան էութեան, ձեւի, քաղաքական եւ վարչական կողմնորոշման, պետութեան կազմաւորման համար, միջազգային իրաւունքով պահանջուող պայմանների նրա կողմից կատարման մասին։ Այդ դեկլարացիայում հաշտութիւն կնքելու լիազօրութիւնների մասին այլեւս չէր յիշատակում։ Դա փաստօրէն հարցադրում-քննութիւն էր։ Դրա փոխարէն՝ իր պերճախօսութեամբ եւ թաքնուած մտքերով փայլեց Ռաուֆ բէյը, որը ողջոյնի խօսքում շնորհակալութիւն յայտնեց երկնքից իրենց ընձեռուած հնարաւորութիւնների համար, իր եւ իր երկրի եւ պատուիրակութեան անդամների անունից դիմեց ցարիզմի անկումից յետոյ աստիճանաբար դէպի անկախութեան գնացող Անդրկովկասի ժողովուրդների ներկայացուցիչներին։ Պերճախօսութեան եւ փարիսեցիութեան գոհարներ էին Ռաուֆ բէյի հետեւեալ խօսքերը․ «Ես պատիւ ունեմ այս թանկարժէք դէպքը դիտել որպէս իմ կեանքի հաճելի ուրախութիւններից մէկը։ Ի դէմս Ձեզ, այսօր ողջունում եմ Ձեր երկիրը ամենեւին ոչ որպէս արարողութիւնների պահանջների եւ դիւանագիտութեան աւանդոյթների պահպանութեան անհրաժեշտութիւն, այլ աւելի շատ՝ ես ոգեւորուած եմ մեծարման զգացումով եւ ցանկութեամբ աջակցել սուրբ գործում, որի ներկայացուցիչները դուք հանդիսանում էք»։ Եւ «Ինչո՞ւ» հարցին պատասխանում էր ինքը՝ թուրքական պատուիրակութեան ղեկավարը՝ չեչտելով Կովկասում թուրքերի յատուկ խնդիրները։ Թուրքիայի եւ Անդրկովկասի ժողովուրդների երկու հարիւր տարուայ ընդհանուր փառապանծ պատմութեան ընթացքում բոլոր ռազմական գործողութիւնները ցարիզմի դէմ աւելի են կապել այդ ժողովուրդներին։ Այդ ժողովուրդների կապող հանգոյցները հանդիսանում են ոչ միայն պատմական եւ աշխարհագրական յարաբերութիւնները՝ այլ աւելի շատ «ազգակցական կապերը, որոնք

բխում են մեր ընդհանուր անցեալից: Հենց այդ պատճառով անդրերկրկապեան եւ թուրք ժողովուրդները կազմուած են այժմ նոյն կրօնից եւ ազգութիւններից եւ ունեն գրեթէ միատեսակ պատմութիւն»: Այսպէսով, թուրքական բացատրութեամբ, Անդրերկրկապի եւ թուրքիայի ժողովուրդները ունեն նոյն արմատները եւ նոյն կրօնը. առաջինները ուժով պոկուել են երկրորդներից, եղել են «ռուսական զնդանում» 200 տարի, եւ վերջապէս վերադարձել են «մայրական գիրկ»⁽⁶⁵⁾: Ռաուֆ Բէյի խօսքերը «Կովկասում թուրքիայի յատուկ խնդիրների մասին»՝ Անդրերկրկապի Պատուիրակութեան վրայ թողեցին ուժեղ տպաւորութիւն՝ գրառուած է Մ. Թումանեանի օրագրում⁽⁶⁶⁾:

Չմտնելով վիճաբանութեան մէջ եւ չժխտելով թուրքական Պատուիրակութեան տեսակէտը՝ Չխենկելին շրջանցեց Ռաուֆ Բէյին հարցադրումները, եւ բաւարարուեց յայտարարութեամբ, թէ «Անդրերկրկապի ազատ ժողովուրդները իրենց ձեռքը վերցնելով իրենց ճակատագրի վճռման գործը՝ կարող են պաշտպանել իրենց երկրամասը»⁽⁶⁷⁾:

Կոնֆերանսի երկրորդ նիստում, Մարտի 2/15-ին, թուրքական Պատուիրակութիւնը կտրուկ մերժեց Չխենկելու առաջարկութիւնը կոնֆերանսում հերթականօրէն նախագահելու մասին: Չցանկանալով բարդացնել հարցը եւ «միջադէպը կոնֆլիկտի չհասցընել»՝ Անդրերկրկապեան Պատուիրակութիւնը ընդունեց թուրքական առաջարկութիւնը. այդպիսով Տրապիզոնը համարուեց թուրքական տարածք, իսկ Անդրերկրկապեան Պատուիրակութիւնը՝ հիւր: Առաջին գիշումը հանդիսացաւ սկիզբ թուրքերի մեթոտական ճնշման եւ Անդրերկրկապեան Պատուիրակութեան միւս նկերտումների համար:

Թուրքական հարցադրումների Անդրերկրկապեան Պատուիրակութեան պատասխանում ասուած էր Անդրերկրկապի էութեան, կառավարման ձեւի, քաղաքական եւ վարչական կառավարման հարցը առաջ է քաշուել նրա որոշման համար միակ իրաւասու մարմնի՝ Անդրերկրկապեան Սէյմի կողմից ստեղծուած ժողովուրդների կամքի ազատ արտայայտութեամբ, համընդհանուր ընտրական իրաւունքի հիման վրայ: Շարադրելով թուրք-անդրերկրկապեան յարաբերութիւնների պատմութիւնը յետհոկտեմբերեան շրջանում՝ Չխենկելին շեշտը դրեց այն հանգամանքի վրայ, որ հատուկիւն կնքելու համար ինքնուրոյն բանակցութիւնների մէջ մտնելու առաջարկութիւնը եկել է Օսմանեան կառավարութեան կողմից, հետեւաբար նա ճանաչել է անդրերկրկապեան ինքնուրոյն իշխանութեան գոյութիւնը, որը «իրենից ներկայացնում է պե-

տութիւն»⁽⁶⁸⁾ :

Թուրքական Պատուիրակութեան խնդրանքով Անդրկովկասեան Պատուիրակութեան ղեկավարացիւան հրապարակուեց եւ քննարկուեց կէտ առ կէտ. այն ապացուցում է թուրքերի ձգտումը խառնուել Անդրկովկասի ներքին գործերին եւ թափանցել նրա վարչական եւ քաղաքական կառուցուածքի մէջ: Այդ ձգտումը նրկատեց եւ Զխենկելին, որը «միջազգային բանակցութիւններում ներքին բնոյթի հարցերի» առաջնաշումը համարեց «անյարմար»: Ժխտելով Անդրկովկասի ներքին հարցերի մէջ խառնուելու գործունը՝ թուրքական պատուիրակութեան ղեկավարը նորից աչքի ընկաւ պերճախօսութեամբ եւ խօսքերի ճամարտակութիւններով: Օսմանեան Կայսրութիւնը թոյլ չի տայ խառնուելու իր ներքին գործերի մէջ եւ ինքը մտադրութիւն չունի խառնուել միւս ժողովուրդների եւ պետութիւնների ներքին գործերի մէջ, յայտարարեց նա: Իր հարցադրումները «հիմնաւորեց» նրանով, որ Անդրկովկասեան կառավարութիւնը գտնուում է ձեւաւորման ընթացքում եւ թուրքերը նրա մասին քիչ բան գիտեն⁽⁶⁹⁾:

Բայց եւ այնպէս՝ Անդրկովկասեան Պատուիրակութեան քննութիւնը շարունակուեց նաեւ նոյն օրը կայացած պատուիրակութիւնների նախագահների մասնաւոր զրոյցի ժամանակ: Նպատակը հիմնաւորուում էր Անդրկովկասի հետ աւելի լայն ծանօթանալու անհրաժեշտութեամբ: «Հենց դրա համար էլ Վեհիբ փաշան գեներալ Օդիշելիձէին յղեց հեռագիր՝ հաղորդելով որ Կոնստանդնուպոլսից Թիֆլիս ուղարկւում է պատուիրակութիւն Անդրկովկասի հետ ծանօթանալու համար, — յայտարարեց Ռաուֆ բէյը՝ աւելացնելով, թէ, — չնայած մեր պատուիրակութիւնում խօսք է գնում ծանօթութեան մասին, սակայն մենք պատրաստ ենք գնալ առաջ եւ ճանաչել ձեր անկախութիւնը: Մենք պէտք է յայտնենք մեր կառավարութեանը մանրակրկիտ հաշուետուութիւն եւ բացատրենք այդ կառավարութեան էութիւնը»: Տարակուսանքի մէջ ընկած Զխենկելին անհրաժեշտ գտաւ ուղղակի յայտարարելու թէ «Ես անյարմար գտայ շօշափել այդ հարցը պաշտօնական նիստում, քանի որ Օսմանեան գլխաւոր հրամանատարը մտնելով բանակցութիւնների մէջ հաշտութեան մասին՝ չէր կարող չիմանալ ո՞ւմ է դիմում»: Զխենկելիւ հարցին թէ պէ՞տք է արդեօք հասկանալ Ռաուֆ բէյի բացատրութիւնը այնպէս՝ որ թուրքական Պատուիրակութիւնը ստանալով անդրկովկասեանից տեղեկութիւններ՝ սպասելու է հրահանգների Կոնստանդնուպոլսից՝ յետագայ բանակցութիւնների համար՝ թուրքական Պատուիրակութեան ղեկավարը խուսափողական պատասխանեց, որ ցանկանում է բա-

նակցութիւնների շտապ աւարտ, քանզի «Օսմանեան կառավարութիւնը դրանում չահագրգռուած է անդրկովկասեան կառավարութիւնից ոչ պակաս»: Սակայն «Օսմանեան կառավարութեան եւ Անդրկովկասի միջեւ պայմանների մանրամասնութիւնների բնորոշումը իրենից ներկայացնում է արտակարգ դժուարին գործ եւ կարիք ունի մանրակրկիտ քննարկման»⁽⁷⁰⁾:

Թուրքական Պատուիրակութեան հարցադրումները առաջացրեցին հակադիր կարծիք Անդրկովկասեան Պատուիրակութեան անդամների մօտ: Դա արտայայտուեց նոյն օրը՝ Մարտի 2/15-ին հաշտութեան պատուիրակութեան երեկոյեան նիստում՝ Մարտի 3/16-ին քննարկուելիք տակտիկական հարցերի կապակցութեամբ: Խառամեղովը նշեց Կովկասի իրավիճակի եւ Անդրկովկասեան Պատուիրակութեան պատասխանի միջեւ եղած անհամապատասխանութիւնը՝ երկրամասի քաղաքական կառուցուածքի վերաբերեալ: Հայդարովը պնդեց թուրքերի հետ լրիւ անկեղծութեան վրայ, «որոնք իրենց հերթին լրիւ սրտաբաց են դնում հարցերը»: Մեհտիւբը համոզուած էր, որ թուրքերը չափազանց չահագրգռուած են հաշտութեան շտապ կնքման մէջ եւ Անդրկովկասեան Պատուիրակութիւնը պէտք է յայտարարի Սէյմին, որ բանակցութիւնները արդիւնքի չեն հասնի, քանի չի յայտարարուել անկախութիւն: «Նախագահը պէտք է յայտարարի թուրքերին, որ մենք փաստօրէն ինքնուրոյն ենք եւ հարցնի՝ համարո՞ւմ են արդեօք թուրքերը հաշտութիւն կնքելու համար անհրաժեշտ պայման անկախութեան հռչակումը»: Հայդարովի հարցադրմանը Լասխիաշվիլին պատասխանեց հակիրճ. թուրքերը իրենք կը դնեն այդ հարցը: Անդրադառնալով Մարտի 3/16-ի նիստի օրակարգին՝ Խատիսեանը առաջարկեց այդ նիստում աւարտել Թուրքական Պատուիրակութեան ձեռնարկած քննութիւնը: Որոշուեց խնդրել Օսմանեան Պատուիրակութեանը աւարտել Անդրկովկասի կառուցուածքի հետ ծանօթութիւնը եւ յայտնել որ բանակցութիւնների հիմքում դրուող սկզբունքների մասին դեկլարացիան պէտք է յայտնուի ոչ ուշ քան Մարտի 4/16-ի առաւօտեան ժամը 10ը⁽⁷¹⁾:

Սակայն Թուրքական Պատուիրակութեան ձգձգող քաղաքականութիւնը շարունակուում էր: Դրա նպատակը ռազմաճակատում առաւելութեան հասնելն էր, ուժի դիրքերից խօսելը: Եթէ սկզբում Ռաուֆ Բէյը յայտարարում էր Սուլթանի կողմից բանակցութիւններ վարելու համար իր ունեցած լիազօրութիւնների մասին՝ ապա յայտարարեց, որ այդպիսի լիազօրութիւններ նա չունի: Մարտի 3/16-ին, երրորդ նիստում, Թուրքական Պատուիրակութիւնը գտաւ անընդունելի՝ Բրեստ-Լիտովսկի դաշնագրի

Կովկասին վերաբերող մասի կապակցութեամբ, Անդրկովկասեան Պատուիրակութեան հիմնադրոյթները, «հիմնաւորելով» այդ նըրանով՝ որ Կովկասեան Կառավարութիւնը Բրեստ-Լիտովսկի դաշնագրի կնքման ժամանակ կազմաւորուած չէր եւ ոչինչ չէր արել իր անկախութիւնը միւս պետութիւնների կողմից ճանաչել տալու համար: Թուրքական կառավարութիւնը ժամանակին իմացաւ Անդրկովկասեան Կառավարութեան կազմաւորման եւ Ռուսաստանից նրա անջատման մտադրութեան մասին, ցանկանալով ծանոթանալ նրա հետ եւ բարեկամական յարաբերութիւններ ձեռնարկել, սակայն մինչեւ հիմա Անդրկովկասը իրեն համարում է «Ռուսաստանի Դաշնակցային Հանրապետութեան անդամ» եւ երկրամասում միայն ռուսական զօրքն է իշխում, այդ իսկ պատճառով Անդրկովկասի անկախութիւնը Թուրքիան չի ճանաչում: Գրաւոր յատուկ յայտարարութեամբ Թուրքական Պատուիրակութիւնը խնդրեց Անդրկովկասեան Պատուիրակութեանը սահմանել եւ հռչակել Անդրկովկասեան Կառավարութեան պաշտօնական ձեւը, պետութեան սահմանները, տարածքը, լեզուն եւ կրօնը, ինչպէս նաեւ «յստակ սահմանել անկախ կառավարութեան դիրքորոշումը եւ վերաբերմունքը Օսմանեան Կայսրութեան նկատմամբ»⁽⁷²⁾:

Այդ հարցերը արծարծուեցին երկու պատուիրակութիւնների ղեկավարների Մարտի 4/17-ի եւ 6/19-ի մասնաւոր խորհրդակցութիւններում: Ռաուֆ Բէյը առաջարկում էր Բրեստի հաշտութեան պայմաններով ու սահմանումներով, զարգացնում էր այն միտքը, որ իրենք եկել են Տրապիզոն ոչ թէ հաշտութիւն կնքելու՝ այլ Անդրկովկասի հետ բարիդրացիական յարաբերութիւններ հաստատելու, հիւպատոսական, առեւտրական եւ այլ բնոյթի պայմանագրեր կնքելու համար: Հաշտութեան պայմանագիր կը կնքուի՝ երբ Սէյմը կը հաստատի Անդրկովկասի անկախութիւնը⁽⁷³⁾:

Թուրքական Պատուիրակութեան առաջադրած հարցերի պատասխանները մշակուեցին Անդրկովկասեան Պատուիրակութեան նիստերում՝ Մարտի 3/16-ին, 4/17-ին, 5/18-ին եւ 6/19-ին, եւ հրապարակուեցին պատուիրակութիւնների բանակցութիւնների չորրորդ նիստում՝ Մարտի 7/20-ին: Նրանում ժխտում էին Թուրքական Պատուիրակութեան առաջադրած «հիմքերը» հաշտութիւն կնքելու համար Անդրկովկասեան Կառավարութեան իրաւունքներից զուրկ լինելու մասին, բերում էին այն բոլոր փաստաթղթերը, որոնք Անդրկովկասի Կոմիսարիատը ստացել էր Կոնստանդնուպոլսի հետ յարաբերութիւնների մէջ մտնելով՝ «վերջնական պայ-

մանագիր կնքելու համար»։ Պատուիրակութեան եզրակացութիւնն էր. «անվիճելի է, որ Օսմանեան Կառավարութիւնը ճանաչել է Անդրկովկասի Կառավարութեանը անկախ եւ միակ լիազօրութեամբ կառավարութիւն՝ կնքելու յայտարարութիւն Օսմանեան Կառավարութեան հետ»։ Անդրկովկասեան Պատուիրակութիւնը միաժամանակ յայտարարեց, որ Թուրքիայի եւ Անդրկովկասի Պատուիրակութիւնների Տրապիզոնում գտնուելը հաստատում է երկու կողմերի կողմից Բրեստ-Լիտովսկի պայմանագրի Անդրկովկասին վերաբերող մասի չընդունելը։

Տրուեց կոնկրէտ պատասխան նաեւ Օսմանեան Կայսրութեան կառավարութեան առաջադրած միւս հարցերին. Անդրկովկասեան Պետութեան տարածքի մէջ մտնում են հինգ նահանգ՝ Բաքուի, Ելիզաւետպոլի, Երեւանի, Թիֆլիսի եւ Քութայիսի, եւ երկու մարզ՝ Սուխումի եւ Չաքաթալայի։ Դադստանի մարզի եւ Սեւծովեան նահանգի հարցը կը վճռուի նրանց ներկայացուցիչներին Անդրկովկասեան Սէյմ գործուղելուց յետոյ։ Պաշտօնական լեզուն ռուսերէնն է. մշակուող սահմանադրութեամբ պետական լեզուներ պէտք է ճանաչուեն վրացերէնը, հայերէնը, թուրքերէնը։ Պէտք է լինի խղճի ազատութիւն։

Թուրքիայի նկատմամբ Անդրկովկասեան Կառավարութեան վերաբերմունքի մասին Օսմանեան Պատուիրակութեան հարցադրմանը տրուեց հետեւեալ պատասխանը. «Իր սահմանում ստանալով Ռուսաստանի եւ Թուրքիայի միջեւ պատերազմի վիճակի ժառանգութիւն, նրանց կողմից աւարտուած Բրեստ-Լիտովսկի պայմանագրով, որի բովանդակութիւնը Անդրկովկասի կապակցութեամբ առաջացրել է Անդրկովկասեան Կառավարութեան բողոքը՝ Անդրկովկասը ներկայ ժամանակ գտնուում է Թուրքիայի հետ այդ պատերազմի հետեւանքների վերացման եւ նրա հետ մուր խաղաղութեան հաստատման համար բանակցութիւնների վիճակում»⁽⁷⁴⁾։

Առարկելով Անդրկովկասեան Պատուիրակութեան դրոյթները՝ Ռաուֆ Բէյը պաշտօնական յայտարարութեան մէջ առաջ քաշեց նոր կռուան. Թուրքիայի առաջարկութիւնը Անդրկովկասեան Կառավարութեանը՝ մտնել խաղաղ հանրապետութիւնների մէջ իրաւաբանական հիմք չունի, քանի որ Օսմանեան Կայսրութեան կառավարութիւնը Անդրկովկասի Կառավարութեանը պաշտօնապէս չի ճանաչել։ Թուրքական կառավարութեան Փետրուարի 10-ի առաջարկութիւնը բնորոշուեց որպէս «վերացական խոստում եւ վերացական առաջարկութիւն», որը չի ամրապնդուել նոյնիսկ «ձեւական պայմանագրով»։ Թուրքական Պատուիրակութեան եզ-

րակացութիւնն այն էր, որ պետութիւնների շարքը չմտած նոր կազմաւորուող պետական միաւորման բողոքը միջազգային ակտ հանդիսացող Բրեստի պայմանագրի պարտադիր լինելու դէմ ոչ մի իրաւաբանական հիմք չունի: Թուրքական Պատուիրակութիւնը կրկին պնդեց իր վարկածը, որ Անդրկովկասի Կառավարութեան հետ Թուրքիայի յարաբերութիւնների մէջ մտնելը «չունի այլ նպատակ, բացի Բրեստ-Լիտովսկի պարտաւորութիւններից դուրս մնացած տնտեսական եւ առեւտրական յարաբերութիւնների նրանց տեխնիկական եւ գործնական մանրութիւնների համար հիմքերի նախապատրաստումը եւ չի նշանակում ամենեւին այդ պայմանագրի նշանակութեան ժխտում»: Պայմանագրի դրոյթները, հակառակ Անդրկովկասեան Պատուիրակութեան կարծիքի՝ միանգամայն պարտադիր են: Օսմանեան Պատուիրակութիւնը ցանկութիւն յայտնեց, որպէսզի «Անդրկովկասը վճռի յայտարարել անկախութեան եւ կառավարման ձեւը, աւելի շուտ՝ քան սկսուած բանակցութիւնները կը կրեն վերջնական բնոյթ»⁽⁷⁵⁾:

Թուրքական Պատուիրակութեան «փակ» քայլերի կծիկը բացուեց պատուիրակութիւնների բանակցութիւնների հինգերորդ նիստում՝ Մարտի 8/21-ին: Օսմանեան Պատուիրակութիւնը կատաղի հանդէս եկաւ Անդրկովկասեան Սէյմի 1918 թուի Փետրուարի 17/Մարտի 2-ի հաշտութեան պատուիրակութեանը տուած հրահանգների Արեւմտեան Հայաստանի ինքնավարութեան վերաբերեալ չորրորդ կէտի դէմ: Նա Անդրկովկասեան Պատուիրակութեան յայտարարութիւնը դիտեց որպէս Օսմանեան Կայսրութեան ներքին գործերի մէջ խառնուելու ցանկութիւն եւ հանդէս եկաւ յայտարարութեամբ, որը երիտթուրքերի յափշտակիչ նկրտումների դրսեւորում էր՝ առանց դիմակի:

Պաշտօնական դեկլարացիայում ասուած էր, որ Կովկասեան Հանրապետութեան վերջնական եւ պաշտօնական ճանաչումը կարող էր կայանալ միայն «Բաթումի, Արդահանի եւ Կարսի սանջակների նկատմամբ որեւէ յաւակնութիւններից հրաժարուելուց յետոյ»: «Օսմանեան Կառավարութիւնը ունի բոլոր իրաւունքները այդ մարզերի նկատմամբ եւ այդ իրաւունքը յեճուում է Օսմանեան Կայսրութեան ուժի եւ հզօրութեան վրայ: Եւ դա պէտք է ճանաչուի Անդրկովկասեան Կառավարութեան կողմից», — յայտարարեց Ռաուֆ Բէյը, — ընդգծելով թէ դա պէտք է լինի Անդրկովկասի Կառավարութեան կողմից «ոչ որպէս Օսմանեան Կայսրութեան իրաւունքի ճանաչում այդ սանջակների նկատմամբ՝ այլ որպէս իրենց ականկալութիւններից հրաժարում»: Այդպիսով Ռաուֆ Բէյը յայ-

տարարեց Բրեստ-Լիտովսկի պայմանագրի անդառնալիութեան մասին՝ բացառելով Կարսի, Արդահանի եւ Բաթումի մասին հարցերի քննարկումը:

Քննարկումը աւարտուեց երկու պատուիրակութիւնների ղեկավարների երկխօսութեամբ. Ա. Ի. Չիսենկելի. «Ես յանգում եմ եզրակացութեան, որ Կարսը, Արդահանը եւ Բաթումը չեն կարող հանդիսանալ մեր քննարկման առարկայ»։ Ռաուֆ Բէյ. «Ճիշդ այդպէս»⁽⁷⁶⁾:

Անդրկովկասեան Սէյմի հիմնադրոյթները Բարձր Դրանը զեկուցելու անհրաժեշտութեան կապակցութեամբ առաջացաւ կոնֆերանսի աշխատանքները ընդմիջելու հարցը: Առաջացաւ նաեւ Անդրկովկասեան Պատուիրակութեան կոնսուլտացիաների անհրաժեշտութիւն կառավարութեան հետ⁽⁷⁷⁾: Սակայն Անդրկովկասեան Պատուիրակութեան նիստերը եւ հարցերի քննարկումները շարունակոււմ էին: Պատուիրակութեան նիստերի արձանագրութիւնները ցոյց են տալիս, որ Անդրկովկասի Ռուսաստանից անջատման թուրքական Պատուիրակութեան հետեւողական միտումը, հայկական եւ մասամբ վրացական տարածքի թուրքիային բռնակցման անգուսպ նկրտումները գտնոււմ էին պատուիրակութեան մոլսուլման պատգամաւորների բացայայտ սատարումը: Աւելի էր զգացոււմ ամբողջական, կուռ, համախոհ Անդրկովկասեան Պատուիրակութեան բացակայութիւնը. «Նրա առանձին ազգային խմբեր մտածոււմ էին իրենց շահերի մասին. մենչեւիկները գնոււմ էին մերձեցման գերմանացիների հետ, մոլսուլմանները՝ թուրքերի հետ: Մուսավաթականները սպասոււմ էին թուրքերի գալուն, տենչոււմ էին վերացնել հայերին, [եւ] Անդրկովկասոււմ դառնալ կառավարող ազգ»⁽⁷⁸⁾:

Ստաւրովսկու այս միտքը հաստատոււմ են հաշտութեան պատուիրակութեան նիստերոււմ մոլսուլման պատուիրակների ելոյթները: Անդրկովկասի ազգաբնակչութեան մեծ մասը՝ մոլսուլմանութիւնը թուրքերի հետ պատերազմի մէջ չի եղել՝ յայտարարեց Հայդարովը պատուիրակութեան Մարտի 4/16-ի նիստոււմ, «մենք եկել ենք ոչ թէ հաշտութիւն կնքելու՝ այլ պատերազմին վերջ տալու, [եւ] թուրքիայի հետ բարիդրացիական յարաբերութիւնները վերականգնելու համար»: Նա շարունակոււմ էր պնդել, որ Անդրկովկասի պետական անկախութիւնը շահեկան է թուրքերի համար եւ բանակցութիւնները պէտք է հիմնել հենց անկախութեան հաստատման հիման վրայ: «Ոչ մէկը մեզ չի ճանաչի մինչեւ որ մենք մեզ չճանաչենք», — յայտարարեց Հայդարովը: Հայդարովին կրկնոււմ էր Խասամաբեդովը. «Բրեստի պայմանագիրը

իրաւաբանօրէն պարտադիր է Ռուսաստանի բոլոր մասերի համար, այդ թւում ե՛ւ Անդրկովկասի: Հարցը պէտք է դնել քաղաքականօրէն. եթէ մենք անջատուել ենք, ապա՝ մշտապէս եւ ո՛չ պայմանական»⁽⁷⁹⁾: Մարտի 6/19-ի նիստում՝ խասմամեղովը իր մտքերը յայտնեց պատերազմի ու խաղաղութեան հարցում: «Եթէ թուրքերը անցնեն սահմանը՝ այն ժամանակ էլ կը մտածենք՝ յայտնե՞լ նրանց պատերազմ թէ ոչ, եւ եթէ այո՝ ապա Անդրկովկասի ժողովուրդներն իրենց մասերը կը յայտարարեն պատերազմ՝ թէ մի մասը»⁽⁸⁰⁾:

Մարտի 7/20-ի եւ 8/21-ի նիստերում մոսկովմանական պատուիրակները առարկում էին Քաջագնունու առաջարկութեանը բանակցութիւնները դադարեցնելու, Թիֆլիս գնալու եւ բանակցութիւնների համար աւելի յարմար վայր ընտրելու հարցում: Հաջինսկին, Մեխդիբեյը եւ խասմամեղովը գտնում էին, որ դա կ'ունենայ վատ հետեւանքներ, քանզի բնակչութեան կողմից կը դիտուի որպէս բանակցութիւնների աւարտ: Վճռականօրէն մերժելով Քաջագնունու առաջարկը՝ նրանք ցանկանում էին «սկիզբից պարզել ինչպէս կը մօտենայ Օսմանեան Պատուիրակութիւնն այդ մտքին»: Ամբողջ կազմով Տրապիզոնից հեռանալը Հաջինսկին համարում էր «պատմական սխալ»⁽⁸¹⁾:

Զիսենկելին, ինչպէս եւ Քաջագնունին, խափսեանք եւ Լասխիշվիլին, կարծում էր, որ ոչ մի հիմք չկայ մնալու Տրապիզոնում՝ չեչտելով որ Տրապիզոն գալու առաջին իսկ օրուանից պատուիրակութիւնը յայտնուել է թուրքերի կողմից տենդագին ռազմական պատրաստութիւնների ականատեսի դերում եւ պատուիրակութիւնը չի կարող հանգիստ մնալ Տրապիզոնում եւ հանահաստանալ Անդրկովկասի ճակատագրով: «Մեր թուլութիւնը միասնութեան բացակայութեան մէջ է. այդ իսկ պատճառով փակուղուց դուրս գալու միակ միջոցն է հնարաւորութիւն տալ Անդրկովկասի իւրաքանչիւր ժողովրդին ինքնուրոյն պարզել իր դիրքը եւ վերաբերմունքը առաջարկած հարցերի նկատմամբ: Մեր պահանջների մի կէտը բաւարարում է մէկ ազգին, միաժամանակ կպչում միւսի շահերին, [իսկ] վերացնելով հակասութիւնը՝ վնաս պատճառում երրորդին: Զօրքերը կանգնած են սահմանի վրայ, դա գաղտնիք չի եւ մեր վիճակը չի կարելի չհամարել լուրջ»⁽⁸²⁾:

Զիսենկելու հարցադրումներում նկատելով «հիասթափութիւն եւ յոռետեսութիւն»՝ Հայդարովը յայտարարեց, որ Զիսենկելին «գիւտ չի արել» եւ իրենք պատրաստ են պատուով կատարել իրենց վրայ դրուած պարտականութիւնը: «Ինչ վերաբերում է նրան, որ մեր մօտ չկայ համակարծիքութիւն՝ ապա մեր հոգիները

որ մէկը չի կարող կարգալ: Մենք մնում ենք այստեղ՝ որպէսզի չզնանք խզման, մենք եկել ենք այստեղ՝ որպէսզի Կովկասում լինի խաղաղ եւ կուլտուրական աշխատանքի հնարաւորութիւն եւ լինի խաղաղութիւն»:

Բանակցութիւններում թուրքական վերամբարձութեան եւ սին խոստումների վերլուծութիւնը եւ հեռանկարի բացակայութիւնը ամփոփուեց Խատիսեանի ելոյթում: «Ի՞նչպիսի բանակցութիւններ եմ ես վարում, երբ ես նստում եմ որպէս տիկնիկ, որին հրամցնում են սուրճ, հրամցնում բարիդրացիական յարաբերութիւնների մասին խօսակցութիւններ, եւ որը կտրուած է ամբողջ աշխարհից»: Նշում էր եւ թուրքական թեւադրանքի առկայութիւնը. «այսօր նրանց եռանդուն բողոքից յետոյ ես միլիարդերորդ տնգամ հասկացայ, որ թուրք ժողովուրդը պետական չէ, եւ թէ նա կարող է իրենից դէն նետել ամբողջ ազգը: Եւ արեւելեան ժողովուրդների կողմնորոշումը, որը պատկերացւում էր որպէս իմ ժողովրդի իդէալ՝ այդ բոլորը պարզուեց առասպել է»: Խատիսեանի եզրակացութիւնն էր, թէ այդ պայմաններում բանակցութիւնները շարունակել չի կարելի, եւ «անհրաժեշտ է դուրս գալ այդ դժոխային պայմաններից»⁽⁸³⁾: Խատիսեանը այն կարծիքին էր, որ եթէ բանակցութիւնները առաջ չեն շարժւում՝ ապա նրա պատճառը նա գտնում է, որ նախաձեռնութիւնը գտնւում է թուրքերի ձեռքին: «Չպէտք է թոյլ տրուի այնպիսի վիճակ, որ թուրքերը իրենց համար անհրաժեշտ պահին մեզ պատասխանեն վճռական»⁽⁸⁴⁾, զգուշացնում էր Խատիսեանը:

Զհամաձայնուելով Խատիսեանի հետ՝ Տրապիզոնից հեռանալու մասին, Խալիլ բէկ Խասմամբեզովը յայտարարեց. «Մենք այնչէիսի վիճակում ենք, որ պէտք է շնորհակալ լինենք այն մի գաւաթ սրճի համար, որ մեզ տալիս են»։ «ընդհանուր լեզու պէտք է գտնել ո՛չ թէ Տրապիզոնում՝ այլ Կովկասում»։ Հաջորդական աւելի վճռական էր Մարտի 9/22-ի նիստում: «Ինձ համար մի բան պարզ է, որ թուրքերի համար կարեւորը մեր անկախութեան հռչակումն է. միայն մեր անկախութիւնը կը տայ հնարաւորութիւն բանակցութիւնների համար: Բրեստի հաշտութիւնը նրանց համար անսասան է. հաշտութիւն կնքելու համար հարկաւոր է անկախութեան հռչակումը եւ Կարսից, Արդահանից, Բաթումից հրաժարւելը: Եւ ուրիշ ոչինչ»⁽⁸⁵⁾:

Թիֆլիս գնալու եւ Սէյմին ու կառավարութեանը զեկուցելու համար հաստատուեց պատուիրկութիւն՝ հետեւեալ կազմով. Գէորգի Լասխիշվիլի՝ մենչեւիկների, ազգային դեմոկրատների

եւ սոցիալ ֆեդերալիստների կողմից, Ռուբէն Քաջազնունի՝ դաշնակցութեան կողմից, Իբրահիմ բէյ Հայդարով՝ մոսկովմանական կուսակցութիւնների կողմից:

Պատուիրակութեան զեկուցումը Մարտի 12/25-ին քննարկուեց Սէյմի նախագահութեան, Ֆրակցիանների ներկայացուցիչների եւ Անդրկովկասի Կառավարութեան համատեղ նիստում: Մանրամասն հաղորդման մէջ Քաջազնունին եւ Լասխիշվիլին անդրադարձան նաեւ Թուրքահայաստանի ինքնավարութեան հարցին: Հաշտութեան պատուիրակութեան թեզիսները չընդունուեցին Թուրքերի կողմից, Թուրքահայաստանի ինքնավարութեան հարցի քննարկումը նրանք համարում են անթոյլատրելի, «իրենց գործը»՝ յայտարարեց Քաջազնունին: «Անկախ Անդրկովկաս Թուրքերը համարում են անհրաժեշտ եւ ցանկալի, քանի որ իբր ստեղծում է պատնէշ Ռուսաստանի եւ Թուրքիայի միջեւ»:

Լասխիշվիլին արձանագրեց, որ Թուրքերը լիազօրուած չէին վարել հաշտութեան բանակցութիւններ, եւ Թուրքահայաստանի ինքնավարութեան հարցում անգիջում էին: Հ. Մելիք-Ասլանովի հարցին՝ «չօչափուե՞լ է արդեօք Հայկական Հարցը պատերազմութիւնների ներկայացուցիչների մասնաւոր խօսակցութիւնների ժամանակ»՝ Լասխիշվիլին պարզաբանեց. «Երբ Ռաուֆ բէյին ներկայացրինք մեր տեսակէտը՝ նա ասաց, որ «վերջին դարերի Թուրքական պատմութեան ամբողջ ընթացքում մեծ պետութիւնները խեղդել են Թուրքիային այդ հարցով եւ երեւում էր», որ հարցադրումը նոյնիսկ վիրաւորական էր Թուրքիայի համար»:

Կարծես թէ ունենալով Օսմանեան Կառավարութեան մանդատը՝ Խ. Հայդարովը վճռական յայտարարեց, որ Թուրքիայի մտքով նոյնիսկ չի անցնում ձեռք բարձրացնել Անդրկովկասի անկախութեան վրայ, Թուրքերը ցանկութիւն չունեն խաթարել Անդրկովկասի անկախութիւնը, եւ նրանք չեն ցանկանում յետագայ պատերազմ եւ նուաճումներ: Յենուելով Բրեստ-Լիտովսկի պայմանագրի վրայ՝ Թուրքիան չի էլ մտածում հրաժարուել Բաթումից, Կարսից եւ Արդահանից, առաւել եւս՝ որ անցեալում պոկուած մարզերի վերադարձը առաջացրել է ժողովրդի եւ բանակի ոգեւորութիւնը: Առաջ քաշելով Անդրկովկասի պետութեան անկախութեան հռչակման հարցը՝ նա ասաց, որ այդ «փաստը չահեկան է Թուրքիային եւ մեր բանակցութիւնները պէտք վարել այդ ոգով»:

Թուրքահայաստանի հարցը չպէտք է դիտարկուի Թուրքիայի ներքին հարց, Անդրկովկասը չի պահանջում Հայաստանի բռնակցում, սակայն հոգալով ազգակից ժողովուրդի վիճակի մա-

սին՝ պարտաւոր է մատնանշել ժողովուրդների ինքնորոշման իրաւունքը: Այդպիսին էր Խ. Կարճիկեանի կարծիքը: «Ո՞վ կը պաշտպանի Անդրկովկասի անկախութիւնը, միայն Թուրքիա՞ն, թէ՛ նրա դաշնակիցները: Ո՞վ ընդհանրապէս կ'երաշխաւորի Անդրկովկասի անկախութիւնը: Եթէ Թուրքերը հաշուի են նստում ռուսների յետագայ աշխուժացման հետ՝ ապա մենք պէտք է իմանանք, թէ՛ ո՞վ է երաշխաւորում մեր անկախութիւնը: Ի՞նչ մեզ կ'ասի Գերմանիան», — խորհում էր Զիւէիձէն:

Լորտ-Կիպանիձէն անհրաժեշտ էր համարում Սէյմի տրուած հրահանգների կիրառումը: Պատուիրակները պէտք է պնդեն Հայաստանի իրավիճակի եւ յետագայ կառուցուածքի մասին, ինչպէս եւ Թուրքերը կարող են խօսել Օսմանեան Պետութեանը ազգակից ժողովուրդների ինքնորոշման մասին: Մեխտիեւը մուսուլմանական ֆրակցիայի անունից յայտարարեց, թէ «եթէ Անդրկովկասի անկախութիւնը չյայտարարուի՝ նրա ֆրակցիան կը հրաժարուի հաշտութեան բանակցութիւնները պաշտպանելուց»: Եւ, ընդհանրապէս, բանակցութիւնները պէտք է վարեն՝ ո՛չ թէ Սէյմի պատւիրակները՝ այլ անկախ կառավարութիւնը՝ արտակարգ լիազօրութիւններով օժտուած իր արտաքին գործերի նախարարի միջոցով:

Միացեալ ժողովը որոշեց. «կանգնելով Սէյմի որոշումներին վրայ, ցանկանալով հասնել Անդրկովկասեան Կառավարութեան եւ Թուրքիայի համար ընդունելի պատուաւոր հաշտութեան՝ ընձեռել հաշտութեան պատուիրակութեան նախագահին այդ ուղղութեամբ ինքնուրոյն քայլեր անելու արտակարգ լիազօրութիւններ», եւ «փոխել պատուիրակութեան բնոյթը»⁽⁸⁶⁾:

Մարտի 12/25 եւ 13/26-ի նիստերում բազմակողմանի քննարկուեց եւ Անդրկովկասի անկախութեան հարցը: Վերլուծելով մօտեցումները՝ Ռամիշվիլին յայտարարեց, որ Անդրկովկասի անկախութիւն ասելով մենք այն նկատի ունենք իրականացնել երկրամասի հին՝ նախապատերազմեան սահմաններում, եւ անկախութեան մասին հռչակագիրը պէտք է ընդգրկի այդ դրոյթը՝ որպէս հիմնական պահանջներից մէկը: Սակայն քանի որ այդ դրոյթը մերժում է Թուրքական կայսերական կառավարութեան կողմից՝ «մենք կարծում ենք, որ հաշտութեան բանակցութիւնների ներկայ փուլում դեռ չի հասել մեր անկախութեան հռչակման եւ մեր պետականութեան վերջնական ձեւաւորման պահը»: Ռամիշվիլու կարծիքով՝ եթէ Թուրքական Կայսրութիւնը շահագրգռուած է պատնէշ պետութեան ստեղծման մէջ, եւ եթէ չի ուզում, որ Անդրկովկասը գործի հակաթուրքական կռաւիցիայում՝ «Թուրքիան

պէտք է եւ չի կարող ընդառաջ չգնալ Անդրկովկասի հին սահմանների վերակազմմանը եւ Բրեստ-Լիտովսկի պայմանագրի Անդրկովկասին վերաբերող մասի վերանայմանը»։ Նա հանդէս եկաւ Լեւ Տրոցկու եւ Լեւ Կամենեւի առաջարկած սկզբունքների դէմ, որ «մենք մտել ենք սոցիալիստական յեղափոխութեան փուլը եւ պետութեան սահմանները նշանակութիւն չունեն»⁽⁸⁷⁾։

Բոլոն քննարկումից յետոյ՝ Սէյմի բոլոր ֆրակցիաները, բացի Մուսավաթից, Մուսուլմանական Բլոկից եւ Մուսուլմանները Ռուսաստանում կազմակերպութիւնից՝ հանդէս եկան Անդրկովկասի անյապաղ անկախութեան հռչակման դէմ։

Մուսուլմանական խմբակցութեան սատարումը աւելի էր ամրապնդում թուրքերի հետեւողական հարցադրումները, թուրքահայաստանի հարցը իրենց ներքին հարց համարելը, եւ Կարսի, Արդահանի, Բաթումի նկատմամբ թուրքական նկրտումներին հետամուտ լինելը։ «Թուրքերին չեն բաւարարում թուրքիայում հայերի կոտորածը, ինքնավարութեան մերժումը․ նրանք Անդրկովկասի հայերից պահանջում են վերածուել թուրքական կառավարութեան գործիքի, ցանկանում են օգտագործել նրանց ազդեցութիւնը Կարսի, Արտահանի եւ Բաթումի սանջակները առանց դիմադրութեան թուրքերին զիջելու եւ թուրքերի հետ բարեկամական յարաբերութիւններ սահմանելու համար։ Թաթարներն ասում են, որ չեն ուզում կոռել թուրքերի դէմ, բայց չէին ուզի պատերազմել եւ հայերի հետ։ Բաթումը թուրքերին պէտք է որպէս Սեւ Մոլմում ուժեղ բազա Ռուսաստանի եւ Բուլղարիայի դէմ, որը սպառնում է Կոնստանդնուպոլսին, իսկ Կարսը անհրաժեշտ է էրզրումի պաշտպանութեան համար։ Հայերին ինքնավարութիւն թուրքիայում չի թոյլատրուի, քանի որ թուրքիան ռազմական պետութիւն է, իսկ թուրքերը կուլտուրական չեն․ պատերազմի դէպքում նրանք սպառնում են ոչնչացնել Անդրկովկասի հայերին։ Իրազարձութիւնները Երեւանի նահանգում, ասում են նրանք, թուրքերի համար միեւնոյնը չեն եւ կարող են առիթ տալ Անդրկովկասի խորքը շարժուելու համար, իսկ այնտեղ, որտեղով կ'անցնի թուրքական զինուորը, չի կարող մնալ ոչ մի հայ»՝ գրում էին Տրապիզոնից Թիֆլիս՝ Մ. Պապաջանեանին։ Նամակում յայտնում էր, որ, ըստ թուրք գործիչների, հայերը «դաւաճանել» են իրենց եւ «միայն իրենց ծառայութեամբ եւ լաւ վերաբերմունքով կարող են արժանանալ թուրքերի սիրաշահութեանը»․ հակառակ դէպքում՝ կործանում է սպասում նաեւ թուրքիայում կոտորածներից մազապուրծ փրկուած 200 հազար հայերին։ Ըստ այդ թուրք գործիչների, որոնցից մէկը Կոնստանդնուպոլսի համալսարանի

պրոֆեսոր եւ պատուիրակութեան առաջին քարտուղար Իսմայիլ Համի բէյն էր՝ «Թուրքիայի համար ոչ մեծ թուով հայեր օգտակար են տնտեսական եւ ֆինանսական առումով, եւ որպէս հակակշիռ յոյների դէմ: Բայց հայերի ուժեղացումը թուրքիայում՝ նրանք թոյլ չեն տայ եւ ոչ մի արտօնութիւնից նրանք չեն կարող օգտուել»: Յայտնելով այս մասին՝ նամակի հեղինակը զգուշացնում էր. «Սրանից յետոյ մենք կարող ենք դատել ո՞ւմ հետ ենք կնքում պայմանագիր եւ ի՞նչ կարող ենք մենք ապագայում սպասել թուրքերից, եթէ մեզ մօտ չլինի ազգութիւնների եւ կուսակցութիւնների միասնութիւն, խիստ կարգապահութիւն եւ յըստակ քաղաքականութիւն: Բայց կարո՞ղ ենք արդեօք դրա յոյսը ունենալ, երբ Սէյմը, նոյնիսկ այսպիսի պահին շարունակում է վտանգաւոր սոցիալական փորձարկումները եւ դրանով բնակչութեան մի մասին մղում թուրքերի դիրկը»: Դա երեւում է եւ «մեր պատուիրակութեան առանձին անդամների գործերով: Թաթարների տրամադրութեան հետ թուրքերը հիանալի ծանօթ են եւ մեր պատուիրակութիւնն այդ յատկապէս զգում է գրեթէ իւրաքանչիւր հարցում, ամէն օր»⁽⁸⁸⁾:

Սէյմի կողմից հաշտութեան պատուիրակութեան նախագահին արտակարգ իրաւունքներ վերապահելը, որի մասին Գեգեչկորին եւ Զիէիճէն հեռագրով յայտնեցին Տրապիզոն՝ առաջացրեց դժգոհութիւն պատուիրակութեան մուսուլման անդամների մօտ: Դա դրսեւորուեց պատուիրակութեան Մարտի 14/27-ի նիստում, հեռագրի քննարկման ժամանակ: «Մենք, պատուիրակութեան անդամներս, պատուիրակների կարգից վեր ենք ածւում խորհրդականների կարգի» յայտարարեց Հաջինսկին: «Մենք ոչ մի իրաւունք չունենք: Այսուհետեւ պատուիրակութեան նշանակութիւնը որպէս միասնական կոլեկտիւ ամբողջութիւն՝ կորցրել է ամէն մի նշանակութիւն»՝ պնդեց Խասմամեդովը: Նա ժխտեց Թիֆլիսի թերթերում եղած հաղորդագրութիւնները պատուիրակութեան մէջ միասնութեան բացակայութեան մասին, եւ ջանաց ապացուցել, որ եղած տարաձայնութիւնները չպէտք է «պատճառահանդիսանային այն լիազօրութիւններին, որ տրուեցին Զիենկելուն»⁽⁸⁹⁾:

Մարտի 17/30-ի նիստում նոր տարաձայնութիւններ առաջացան, մասնաւորապէս Թուրքահայաստանի ինքնավարութեան հարցում: Վերլուծելով Բրեստի պայմանագրի հրապարակուած տարբերակը՝ Խատիսեանը յայտնեց այն կարծիքը, թէ Անդրկովկասեան Պատուիրակութիւնը չի կարող հեռանալ պայմանագրի լրիւ ժխտման դիրքերից՝ Կարսի, Արդահանի եւ Բաթումի հարցում:

խօսքը գնում է ոչ թէ ինքնորոշման՝ այլ պետական տարածքի որոշակի մասի զիջման մասին: Նրա կարծիքն էր, որ զիջման ղէպքում պէտք է առաջնորդուել թէ՛ համակովկասեան եւ թէ՛ ազգային շահերով: Եւ այդ երկու շահերը համընկնում են, քանզի խօսքը գնում է Կարս, Արդահան եւ Բաթում ամրոցների մասին: Եթէ Թուրքիան չի հրաժարուում Կարսից, ապա ամէն կերպ պէտք է պահպանել Արդուին, Արդանուշ-Արդահան ճանապարհը, ինչպէս նաեւ Կարսի մարզի արեւելեան՝ Հայկական մասը: Խատիսեանը բարձրացրեց եւ Թուրքահայաստանի հարցը, ասելով, թէ ինչպէս է ուզում լուծել այդ հարցը Թուրքիան: Մենք չենք կարող ստիպել Անդրկովկասում գտնուող 400 հազար փախստական Թուրքահայերին հրաժարուել ազգային գաղափարից. «Այդ հարցին պէտք է տալ նոր ձեւակերպում. դա պէտք է լինի Թուրքիայում Հայաստանի տարածքային ինքնավարութեան, հայերի վերադարձման եւ ազգային մարզերում բնակեցման իրաւունքի ապահովումով»: Շէյխունլ իսլամովը անգէտ ձեւանալով՝ յայտնեց թէ «ինչո՞վ է առաջնորդուում Թուրքիան բռնակցելով այդ մարզերը՝ ամրոցների՞ հարցով, թէ այդ մարզերի ազգային կառուցուածքով»⁽⁹⁰⁾:

Թուրքահայաստանի հարցը դարձաւ խոր քննարկման հարց պատուիրակութեան Մարտի 18/31-ի նիստում, որտեղ քննարկւում էին Սէյմի հիմնադրոյթների 3-րդ եւ 4-րդ սահմանումները:

Թուրքահայաստանի ինքնավարութեան հարցի կապակցութեամբ զեկուցումով հանդէս եկաւ Ա. Խատիսեանը: Պնդելով այդ հարցի լուծման անհրաժեշտութեան վրայ՝ Խատիսեանը առաջ քաշեց տարածքային, բռնագաղթածների վերադարձի եւ բնակեցման, եւ ինքնավար Թուրքահայաստանի իրաւունքների հարցը: Զեկուցողը գտնում էր, որ պատուիրակութիւնը պէտք է ձգտի հասնել Թուրքահայաստանի ինքնավարութեանը՝ թէկուզ միւնիմալ տարածքի խիստ որոշակի սահմաններում. այդ տարածքները կը հանդիսանային էրզրումի վիլայէթի Բայազէտի սանջակը, Բիթլիսի վիլայէթի Մուշի սանջակը եւ Բիթլիսի սանջակի հիւսիսային մասը, եւ Վանի վիլայէթի Վանի սանջակը՝ մինչեւ Բաթման-սու գետի հարաւային շրջանը: Այսպիսով՝ Վանայ լիճը՝ Մուշի, Վանի եւ Ալաշկերտի երեք դաշտավայրերով դառնում էին հայ ժողովրդի ուշադրութեան կենտրոն: Այդ տարածքը վերադառնալու առաջին իրաւունքը տրուել էր հայերին: Այնտեղ կարող էին վերադառնալ մօտ 800 հազար հայ՝ Անդրկովկասից, Թուրքիայի փոքրասիական վիլայէթներից, Միջագետքից, Ամերիկայից եւ այլ վայրերից: Կարող էին վերադառնալ եւ նախկինում այնտեղ բնակուած այլ ժողովուրդների ներկայացուցիչներ: Իրենց ներքին գործերը

վարելու համար այդ տարածքի բնակչութիւնը պէտք է օգտուի ինքնակառավարման իրաւունքներից՝ օժտուած օրէնսդիր ժողովով եւ ընտրովի գործադիր մարմնով, պէտք է ունենայ ոստիկանութիւն տարածքում բնակւող բոլոր ազգերի ներկայացուցիչներից: Պէտք է լինէր եւ միջազգային երաշխիք՝ Գերմանիայի դաշնակիցների եւ Անդրկովկասեան Պետութեան կողմից եւ հենց իր՝ Թուրքիայի կողմից⁽⁹¹⁾: Կատարելով լրացումներ՝ Յ. Քաջազնունին անհրաժեշտ էր գտնում, որ հաշտութեան պայմանագիրը կնքելու հետ անմիջապէս Սուլթանը հռչակի Թուրքահայաստանի ինքնավարութիւնը՝ Թուրքիայի հովանաւորութեան տակ, ընդունելով որ ինքնավար Թուրքահայաստանը Սուլթանին վճարում է տարեկան հարկ, եւ ունի իր սեփական կառավարութիւնը եւ ոստիկանութիւնը⁽⁹²⁾:

Սակայն Թուրքահայաստանի ինքնավարութեան հարցի քննարկման դէմ հանդէս եկած մոսկովման պատուիրակների եւ նրանց համախոհների թուանոթարն աւելի ծանր էր: Լասխիշվիլին գտնում էր, որ Անդրկովկասի ներկայ վիճակը եւ թուրքերի ու անդրկովկասցիների ուժերի յարաբերութիւնները հնարաւորութիւն չեն տալիս վերցնել Հայկական Հարցի լուծման ծանրութիւնը: Այդ հարցը պէտք է դրուի համաշխարհային հաշտութեան կոնֆերանսի առաջ, իսկ այժմ 4-րդ կէտը քննարկումից պէտք է հանել: Նա, սակայն, գտնում էր, որ Անդրկովկասեան Պատուիրակութիւնը պէտք է բացատրի թուրքերին, որ Թուրքահայաստանի հարցով զբաղուելը «Թուրքիայի ներքին գործերին միջամտել չէ, Անդրկովկասը չի կարող հանգիստ ապրել եւ ազատ զարգանալ, եթէ Հայկական Հարցը Թուրքիայի սահմաններում լուծում չստանայ»: Նրա կարծիքով՝ պէտք է կնքուէր յատուկ կոնվենցիա Թուրքիայի հետ՝ թուրքահայերի իրաւունքների եւ նրանց տուն վերադառնալու մասին⁽⁹³⁾:

Յիշեցնելով որ թուրքերը ասել են միայն երկու խօսք, որ Թուրքահայաստանի ինքնավարութեան հարցը առաջ քաշելը միջամտութիւն է Թուրքիայի ներքին գործերին՝ Հաջինսկին «միամտօրէն» ցանկանում էր հարցնել թուրքերին, թէ ինչպէ՞ս են նրանք վերաբերում այդ հարցին եւ «կամ բացարձակապէս մերժւում է ամէն մի բանակցութիւն այդ հարցում, կամ ցանկանո՞ւմ են փոխել քննարկման ձեւը», այդ դէպքում՝ Սէյմը կը հրաժարուի հարցադրման իր ձեւից: Նա ցանկանում էր Տրապիզոնից Կովկաս վերադառնալ «ունենալով յստակ պատկերացում թէ ի՞նչ ձեւով է ընդունւում երկու կողմերի կողմից Հայկական Հարցը»: Մատնանշելով, որ այդ հարցը ըստ էութեան չի լուսաբանուել Սէյմում,

չի լուսաբանուել նոյնիսկ հաշտութեան յանձնաժողովում՝ Հաջի-նըսկին ընդհանրացրեց թէ «այստեղ հնարաւորութիւն չեն տալիս ծանօթանալ նրա հետ»⁽⁹⁴⁾։ Հայկական Հարցն առաւել ծանրն է․ այն չեն կարողացել վճռել մեծ տէրութիւնները՝ Ռուսաստանը, Անգլիան, Ֆրանսիան։ «Այժմ դնել այդ ծանրութիւնը դեռ թոյլ, չկազմաւորուած Անդրկովկասի ուսերի վրայ, դա նշանակում է ճգմել դրանով Անդրկովկասը, երկրամասը ներքաշել արկածախնդրութեան մէջ։ Եւ, յատկապէս, Թուրքական Պատուիրակութեան վերջին յայտարարութիւնից յետոյ դա անթոյլատրելի է»՝ յայտարարեց Գվազաւան։ Յենուելով թուրքերի վերջնագրի վրայ, Գվազաւան առաջարկում էր չխօսել «Հայաստանի ինքնավարութեան մասին, եթէ ցանկանում էք հասնել բարի յարաբերութիւնների եւ հարեւանութեան վերականգնման նպատակին»։ Գվազաւան գտաւ, որ «այսպիսի յայտարարութիւնից յետոյ մենք չենք կարող նորից դնել Հայաստանի ինքնավարութեան հարցը․ դա կը նշանակէր խզել բանակցութիւնները իր բոլոր հետեւանքներով»։ Այս յայտարարութիւնից յետոյ Խատիսեանի եւ Քաջազնունու հարցադրումները համարելով որպէս «իրենց մաքսիմալ պահանջների որոշակիութեամբ հեռու գնացող», իրադրութեան հետ հաշ-ւի չնստող առաջարկութիւն՝ Գվազաւան առաջարկեց ընդհանրապէս հանել 4-րդ կէտը, դրանում տեսնելով «միակ ելքը ստեղծուած վիճակից»⁽⁹⁵⁾։

Գվազաւային անմիջապէս արձագանգեց Խասմամեդովը։ Այն ձեւով, ինչպէս որ շարադրուած է Սէյմի պահանջը Հայկական Հարցի գծով՝ «դա ոչ այլ ինչ է՝ քան Օսմանեան Պետութեան ներքին գործերին միջամտութիւն։ Եւ իրեն յարգող ամէն մի պետութիւն պէտք է հենց այդպէս արձագանգի։ Այդ պատճառով ես համարում եմ միանգամայն բնական այն պատասխանը, որը մենք ստացել ենք Օսմանեան Պետութեան պատուիրակութիւնից»⁽⁹⁶⁾։

Ա. Շէյխ-ուլ Իսլամովը առաջարկեց առաջադրուած թեզիսներից բացառել 4-րդ կէտը՝ այն փոխարինելով այնպիսի առաջարկով, որը ընդունելի լինի Թուրքիայի ներքին գործերին չմիջամտելու տեսակէտից։ «Մենք Թուրքիային առաջարկում ենք այն հարը՝ Թուրքահայաստանը, որը մի քանի անգամ Եւրոպան մատուցել է «Հիւանդ Մարդուն» եւ Հիւանդ Մարդը, ուժի ճնշման տակ ընդունել է, բայց կուլ չի տուել եւ բարելաւելով պահը՝ վերադարձրել է յետ՝ նոյն Եւրոպային»։ Շէյխ-ուլ Իսլամովը Հայկական Հարցի քննարկումից հանելը «հիմնաւորեց» հայերի շահերի պաշտպանութեամբ․ «եթէ խզուեն բանակցութիւնները՝ ապա

նա ուժեր կ'ուղարկի հայ մասսաների շահերի վրայ» եւ «կը հասցնի հայերի նոր կոտորածներ»⁽⁹⁷⁾։ Մուսուլմանական խմբի խորհրդական Ա. Պեպինովը գտնում էր, որ չպէտք է սահմանափակել միայն Հայկական Հարցի լուծումով եւ պէտք է ասել Օսմանեան Պատուիրակութեանը, որ ցանկալով սահմանել բարիդրացիական յարաբերութիւններ՝ Անդրկովկասեան Պատուիրակութիւնը աշխատում է ապահովել երկրամասի սահմաններում ներկայումս գտնուող Օսմանեան Կառավարութեան բոլոր հպատակներին անարգել վերադարձ Օսմանեան Պետութեան տարածք⁽⁹⁸⁾։

Բուռն էին Մարտի 19/Ապրիլի 2 եւ Մարտի 21/Ապրիլի 4-ի նիստերը, որոնք նուիրուած էին Սէյմի առաջադրած հիմնադրոյթների 3-րդ՝ սահմանների ճշգրտման հարցին եւ թուրքերի Մարտի 8/21-ի վերջնագրի պատասխանին^(98բ)։ Հին՝ 1914 թուի սահմաններն արդէն համարւում էին վիճաբանական եւ խօսքը պէտք է գնար խաղարձ գիջումների մասին։ Այստեղ արդէն փոխադարձ գիջումների հարց վրացական եւ մուսուլմանական պատուիրակների կողմից չէր առաջանում. հարցը գնում էր հայկական տարածքների թուրքիային շոայլօրէն գիջելու մասին։

Մարտի 19/Ապրիլի 2-ի նիստում երեք ամբոցների՝ Կարսի, Արդահանի եւ Բաթումի հարցի մասին հիմնական զեկուցող պատուիրակութեան խորհրդական Պ. Ինգորաւան դրեց Բաթումի մարզը ամբողջապէս Անդրկովկասին թողնելու, Արդահանի եւ Օլթիի օկրուգների, հայկական՝ Կարսի եւ Կաղզուանի օկրուգների մի մասը թուրքիային յանձնելու՝ որպէս մինիմում գիջման հարցը։ Շէյխ ուլ Իսլամովը բերեց «պաշտօնական» տուեալներ, որոնցով «ապացուցւում էր» որ մուսուլմանները Կարսի եւ Կաղզուանի օկրուգներում կազմում են համեմատական մեծամասնութիւն, իսկ Կարսի ամբողջ մարզում՝ բացարձակ մեծամասնութիւն, այն դէպքում, երբ այստեղ ազգաբնակչութեան երկու երրորդը հայեր, ռուսներ, յոյներ էին։ Հաջինսկին գտնում էր, որ պէտք է լինի մաքսիմում գիջում, տնտեսական առումով պէտք է Անդրկովկասի համար պահել Բաթումի նաւահանգիսը՝ հրաժարուելով նրա ռազմական նշանակութիւնից։

Կշտամբելով պատուիրակութեան անդամներին, որ նրանք մտածում են միայն հարաւային սահմանների ամրացման մասին եւ ոչ մի անգամ չեն խօսում հիւսիսային սահմանների ապահովման մասին՝ Հաջինսկին շեշտում էր որ Անդրկովկասին «մեծ վտանգ է սպառնում այնտեղից, քանզի Ռուսաստանի իմպերիալիստները, անկասկած, կը ցանկանան վերադառնալ երկրամաս»։ Նորից դնելով Անդրկովկասի անկախութեան անյապաղ հռչակման

հարցը եւ կրկնելով որ թուրքերի դէմ Անդրկովկասի մուսուլմանները չեն կուրի՝ Մուսավաթի ներկայացուցիչը կատարեց նաեւ Ռուսաստանին սիրաշահելու փորձ: «Շատերը ուզում են Անդրկովկասի անկախութեան հռչակման մեր հետեւողական պահանջը բացատրել Ռուսաստանի նկատմամբ իբր թէ մեր անբարեացակամ վերաբերմունքով: Դա մեծ սխալ է: Անդրկովկասի բոլոր ժողովուրդներից ամենածանրը մեզ համար կը լինէր կտրուել Ռուսաստանից»: Եւ պատճառը նորից մուսուլմանական գործօնն էր: «Այնտեղ մնում են մօտ 20 միլիոն մեր եղբայր մուսուլմանները, որոնց ճակատագրով մենք հետաքրքրոււմ ենք, եւ որոնք մեր ճակատագրին անտարբեր չեն»:

Զգտնելով տրամաբանութիւն ամբողջ տարածքը յանձնելու եւ Բաթումի նաւահանգիստը պահելու հնարաւորութեան միջեւ՝ Քաջագնունին գտնում էր, որ պէտք է գիջել Արդուխնի, Արդահանի եւ Օլթիի օկրուգները, եւ պահել Բաթումի, Կարսի, եւ Կադզուանի օկրուգները՝ համարելով որ «այդ օկրուգների բնակչութեանը թուրքիային յանձնումը կը նշանակի նրանց նկատմամբ կատարել դաժան բռնութիւն»:

Հաջինսկու կարծիքին միացաւ Խասմամեդովը՝ համարելով այդ կարծիքը ոչ թէ անձնական՝ այլ «Մուսավաթ կուսակցութեան, որին իրենք պատկանում են»: Առարկելով Վիչապելուն՝ որ Անդրկովկասի անկախ պետութեան բոլոր քաղաքացիները պէտք է պաշտպանեն իրենց սահմանները, մի բան, որից մուսուլման պատուիրակները հրաժարոււմ են՝ Խասմամեդովը նորից առաջ քաշեց Անդրկովկասի անկախութեան հռչակման հարցը: Սահմանների պաշտպանութիւնը «միանգամայն ճիշդ է, երբ այդ պետութիւնը իրօք անկախ է եւ ունի որոշակի սահմանադրութիւն: Անդրկովկասը ոչ միայն չունի սահմանադրութիւն՝ այլեւ չի հռչակել իր անկախութիւնը: Դուք բոլորդ գիտէք, որ մուսուլմաններն ամբողջ ժամանակ պնդել են այդ անկախութիւնը եւ նրանց մեղքը չի, որ այդ ցանկութիւնը չի իրականացել»: Խասմամեդովը միանշանակ յայտարարեց թէ «Թուրքիայի հետ պատերազմին մուսուլմանները չեն մասնակցի, եւ եթէ հայ եւ վրաց ժողովուրդները զգում են ուժ եւ ունեն հնարաւորութիւն՝ թող այն սկսեն իրենց պատասխանատուութեամբ»:

Մուսուլման պատուիրակների գործունէութիւնը Խատիսեանը բնորոշեց որպէս Մուսավաթ կուսակցութեան հրաժարումը ընդհանուր Անդրկովկասեան գործերին օգնելուց: «Ինչպէս որոշակի նրանք յայտարարեցին՝ ուժով չեն պաշտպանելու մեր պահանջները, եւ լաւագոյն ելքը նրանք տեսնում են վիճելի մարզե-

րին Օսմանեան Կառավարութեան յանձնելու մէջ: Խոր վշտով մենք արձանագրում ենք, որ գուցէ մենք չհասնենք մեր նպատակին ո՛չ թէ նրա համար որ թուրքերը շատ ուժեղ են՝ այլ այն պատճառով որ մեր սեփական միջավայրում մենք չգտանք սպասուած սատարումը: Մեր անյաջողութեան պատճառը մեր ներքին թուլութիւնն է: Այսօր մեզ ասացին, որ մեր դիմադրողականութիւնը հասցուել է զերոյի, եւ եթէ դա այդպէս է՝ մեր վիճակը թշուառ է եւ բացի կապիտուլացիայից՝ մեզ ոչինչ չի մնում անել»: Եւ ապա՝ «եթէ ճիշդ են Գ. Մ. Լասխիշվիլին, Գ. Բ. Հայդարովը եւ Ռ. Խ. Քալազնունին, որոնք հաղորդեցին մեզ Սէյմի կամքը՝ բանակցութիւնների ժամանակ պայքարել իւրաքանչիւր թիզ հողի համար, ապա ինչի՞ հիման վրայ է Մ. Գ. Հաջինսկին առաջարկում թուրքերին զիջել ամէն ինչ, այնպէս որ մեզ ոչ մի արշին չմնայ վիճելի մարզերում»:

Ամփոփելով Մարտի 19/Ապրիլի 2-ի նիստի արդիւնքները՝ Զիսենկելին յայտնեց այն միտքը, թէ Տրապիզոնում, այդ դահլիճում, որտեղ կայանում է յանձնաժողովի նիստը, վճռում է Անդրկովկասի ճակատագիրը: Թուրքիայի հետ պատերազմը խաղատախտակի վրայ է դնում Անդրկովկասի գոյութեան եւ միասնութեան հարցը: Թուրքիան այսօր կարող է կանգնել Օլթիի թուրքերի եւ աջարցիների ինքորոշման վրայ, որոնք վրացիներ են, սակայն «յետամնացութեան եւ պատերազմական սարսափների հետեւանքով կարող են լինել թուրքական կողմնորոշման միտումներ: ... Ես վճռականապէս կ'ապստամբեմ նման ինքնորոշման դէմ: ... Ես որպէս ղեմոկրատ՝ պէտք է նրանց փրկեմ այդ կողմնորոշումից, քանզի ընկնել թուրքական տիրապետութեան տակ՝ այդ մասսաների համար նշանակում է կորցնել ինչպէս քաղաքացիական՝ այնպէս էլ քաղաքական ազատութիւնները»՝ յայտարարեց Զիսենկելին, թեթեւ սրտով առաջարկելով Թուրքիային յանձնել Կարսի եւ Կադգուլանի հայկական օկրուգները: Անկախ Անդրկովկասի հռչակման հարցը, ինչպէս Հաջինսկին եւ Շէյխ-ու Իսլամովը՝ Զիսենկելին արդէն համարում էր առաջնահերթ հարց եւ այդ հարցում նա սպասում էր Թուրքիայի «ամենաեռանդուն եւ բարոյական սատարումը»: Թուրքերի հետ համաձայնութեան գալու հնարաւորութիւնը նա տեսնում էր անկախ Անդրկովկասի ստեղծման մէջ, որում թուրքերը շատ շահագրգռուած են: «Այդ մասին բազմիցս ինձ ասել է Օսմանեան Պատուիրակութեան ղեկավար Ռաուֆ Բէյը: Դա շատ ցանկալի է Թուրքիային: Անդրկովկասի այդ անկախութիւնը թուրքերին երաշխաւորում է հիւսիսի վտանգից»⁽⁹⁹⁾՝ յայտարարեց Զիսենկելին:

Մարտի 21/Ապրիլի 4-ի նիստում Ա. Չխենկելին ներկայացրեց իր առաջարկները Թուրքիայի զիջումների հարցում. յանձնել 1) ամբողջ Օլթիի օկրուգը, 2) Արդահանի օկրուգի մեծ մասը, 3) Կարսի օկրուգը՝ Բեգլի Ահմեդի գծով ցած, եւ 4) Կաղզուանի օկրուգը, առանց Կաղզուան քաղաքի եւ նրա հիւսիսային մասին: 4-րդ կէտի՝ Թուրքահայաստանի մասին հիմնադրոյթների կապակցութեամբ պէտք է տալ բացատրութիւն՝ գրում էր Չխենկելին, այն է՝ պատուիրակութեան բարձրացրած հարցը ամենեւին չի նշանակում միջամտութիւն Թուրքիայի ներքին գործերին: Սակայն քանի որ Թուրքերը այդպէս են հասկանում՝ պէտք է գտնել այն տարբերակը, որը «մենք նրանց հետ համաձայնեցուած կարող ենք դնել քննարկման»⁽¹⁰⁰⁾:

Տարածքային զիջումների վերաբերեալ Չխենկելու ներկայացրած նախագծի դէմ առաջինը վճռականապէս հանդէս եկաւ Յ. Քաջազնունին: Նա հիմնաւորուած պնդում էր, որ Կարսի եւ Կաղզուանի օկրուգների ազգաբնակչութեան մեծամասնութիւնը կազմող հայերը, ռուսները եւ յոյները չեն ցանկանում միաւորուել Թուրքիայի հետ, մինչդեռ պատուիրակութեան ղեկավարը Թուրքիային չյանձնելով Արդուլինի օկրուգը՝ առաջին հերթին յանձնում է Կարսի եւ Կաղզուանի օկրուգների մասերը եւ քրիստոնեայ բնակչութեանը դնում է անելանելի վիճակի մէջ: «Նրանք պէտք է կամ ապրեն նրանց հետ ում հետ չեն ուզում եւ չեն կարող ապրել՝ կամ էլ դուրս գալ հայրենիքի տարածքից, թողնել տնտեսութիւնը եւ շարժուել ինչ որ տեղ»: Քաջազնունին գտնում էր, որ այդպէս վարուելով՝ պատուիրակութիւնը հրաժարուում է դեմոկրատիայի հռչակած, իրենց իսկ յորջորջած սկզբունքներից եւ թոյլ է տալիս խոշոր սխալ: Դիմելով Չխենկելուն եւ համախոհներին՝ ասաց. Վրաստանի համար «դուք ցանկանում էք պահպանել պաշտպանութեան մէջ գօտի եւս. ցանկանում էք Բաթումի օկրուգի թիկունքում ունենալ նաեւ Արդուլինի, Ախալցխայի եւ Ախալքալաքի գաւառները, իսկ թիկունքում՝ Արդահանը: Մինչդեռ, յանձնելով Կարսի եւ Կաղզուանի օկրուգների մասը՝ ոչ միայն առաջ էք շարժում Թուրքական սահմանները դէպի հայկական մարզերի դռները՝ այլեւ կտրում էք այդ մարզերից աշխարհագրական, տնտեսական եւ ազգագրական անբաժանելի մասեր»⁽¹⁰¹⁾:

Մի կողմից յայտնելով անհամաձայնութիւն Չխենկելու թեզիսներին եւ միւս կողմից կշտամբելով պատուիրակութեան անդամներին, որոնք չէին խօսում զիջուող մարզերում «հսկայական մեծամասնութիւն կազմող մուսուլմանների շահերի մասին»՝ Պեպինովը ծանուցեց, որ Վրաստանի, Ադրբեջանի եւ Հայաստանի

կազմից դուրս մնացած Բաթումի եւ Կարսի մարզերի մուսուլմանական միաւորները մտածում են կազմել Անդրկովկասում առանձին չորրորդ միաւորը, քանզի նրանց միջեւ տնտեսական, կրօնականեցադային, ռասսայական կապերը շատ ուժեղ են եւ էական»։ Թուրքերի զբաղեցրած տարածքում պէտք է ստեղծուի առանձին ինքնավարութիւն Թուրքիայի հովանաւորութեամբ, որի հնարաւորութիւնը թոյլ է տրւում Բրեստ-Լիտովսկի պայմանագրով։ Թուրքիայի հովանաւորութեան ներքոյ նա ցանկանում էր տեսնել եւ ամբողջ Անդրկովկասը՝ որպէս ինքնավար միաւոր⁽¹⁰²⁾։

Ինչպէս միշտ՝ միատեսակ կարծիք ունէին Հաջինսկին եւ իսամամեզովը։ Զխենկելու առաջարկութիւններով բաւարարւած՝ նրանք խորհուրդ էին տալիս վերջինիս գործել ինքնուրոյն եւ առանց քուէարկութեան, քանզի «կարծիքները հիմնովին հակասական են»⁽¹⁰³⁾։

Մարտի 23/Ապրիլի 6-ի առաւօտեան նիստում, յենուելով Ռաուֆ բէյի պնդման վրայ՝ Զխենկելին նորից դրեց Անդրկովկասի անկախութեան հարցը։ Եթէ Անդրկովկասը չյայտարարի իր անկախութիւնը՝ Թուրքիան նրան կը համարի որպէս ռուսական գաւառ, որը չի ենթարկւում հաշտութեան պայմաններին, իսկ հաշտութեան բանակցութիւնների վերսկսման պահին անկախութեան հռչակումը «Թուրքերի վրայ կը թողնէր լաւ տպաւորութիւն»։ Այդ առաջարկութիւնն առաջինը պաշտպանեց Շէյխ-ուլ Իսլամովը։ «Ռուսաստանի հետ կապը այսուհետեւ պէտք է լինի զուտ էֆեմերային»⁽¹⁰⁴⁾, յայտարարեց նա։

Մարտի 23-ի երեկոյեան նիստում Զխենկելին հրապարակեց Ռաուֆ բէյի վերջնագիրը — 48 ժամում տալ պատասխան Մարտի 8/21ի թուրքական յուշագրի կապակցութեամբ։ Դրանից երեւում էր, որ թուրքական կողմին չէր բաւարարում Անդրկովկասեան Հաշտութեան Պատուիրակութեան պատասխանը Կարսի մարզը՝ Կարսի մարոցով, Կաղզուանի եւ Կարսի օկրուգների մի մասով, Արդուիների օկրուգը առանց Արդուիների տեղամասի գիջելու մասին։ Բուռն քննարկումից յետոյ հարցի վերջնական լուծումը թողնուեց Սէյմի վրայ⁽¹⁰⁵⁾։

Թուրքական հարցադրման պատասխանը մշակուեց Անդրկովկասեան Պատուիրակութեան Մարտի 26 եւ 28/Ապրիլի 8 եւ 11-ի նիստերում⁽¹⁰⁶⁾։ Պատուիրակութեան մուսուլման անդամները մնացին հաւատարիմ իրենց ուխտին։ Հաջինսկին նորից պնդեց Թուրքերին մասքսիմում գիջման իր առաջարկութիւնը։ «Այսօր, ինչպէս եւ երէկ, ես ընդգծում եմ, որ եթէ մեր նախագահի առաջարկած մաքսիմումը, որը քիչ է, քան իմ ասածը, Թուրքերին

չբաւարարի, իսկ միւս կողմից Անդրկովկասը չի մտածում կռուել, ապա գերապատուելի է կանգնել Բրեստ-Լիտովսկի տեսակէտի վրայ, եւ որքան շուտ՝ այնքան լաւ»։ Այդ դէպքում, համարում էր Հաջինսկին «կը ստեղծուի վիճակ, երբ մենք ինքներս ենք ընդունում պայմանագիրը եւ հրաժարում ենք վիճաբանական մարզերից. այլ վիճակ կը լինի, երբ թուրքերը այդ մարզերը վերցնեն զէնքի ուժով։ Երկրորդ դէպքում Բրեստի պայմանագրի մասին խօսք լինել չի կարող, քանի որ թուրքերը վիճելի մարզերի նկատմամբ կ'ունենան կրկնակի իրաւունք, միջազգային իրաւունքի համաձայն եւ նուաճման իմաստով։ Վերջին իրաւունքը չափազանց ծանրակշիռ է»։

Թուրքական զօրքերի առաջ խաղացումը եւ նրանց կողմից վիճելի մարզերի նուաճումը Խասմամեդովը դիտում էր, եւ այդպէս պահանջում միւսներէր, ո'չ թէ որպէս նուաճում՝ այլ որպէս թուրքական «իրաւունքներու վերականգնում»։ Ռուսաստանը կատարել է իր պարտաւորութիւնը եւ այդ մարզերը ազատել է իր զօրքերից։ Նրանց փոխարինած կովկասեան ազգերի զօրամասերը թուրքերի կողմից դիտւում են որպէս աւազակախմբեր։ Անդրկովկասը Ռուսաստանի մասն է եւ «այժմ Թուրքիան Կարսի եւ Բաթումի մարզերը խլում է աւազակախմբերից»։ Յետագայ բարդութիւններից ելքը անկախութեան հռչակումն է եւ Բրեստի պայմանների ճանաչումը⁽¹⁰⁷⁾։

Այդ միտքը Խասմամեդովը զարգացրեց եւ Մարտի 28/Ապրիլի 11-ի նիստում։ Թուրքական վերջնագրում կայ երկու միտք, նշեց նա. առաջին՝ որ մենք որպէս Ռուսաստանի մի մասը՝ մեզ համար պարտադիր ենք համարում Բրեստի պայմանագիրը, ապա, որպէս Ռուսաստանի մաս մենք չենք կարող միջամտել այդ մարզերի գործերին, եւ որպէսզի այդ իրաւունքը ունենանք, առաջին հերթին մեզ պէտք է ճանաչեն որպէս անկախ պետութիւն։ «Եւ կը ցանկանայի որ մենք լաւ ըմբռնենք թուրքական պահանջների էութիւնը եւ նրանց համապատասխան կարողանանք ընդունել համապատասխան որոշում»՝ ասաց Խասմամեդովը պատուիրակութիւնը նորից տանելով դէպի անկախութեան ոլորտը։

Մարտի 31/Ապրիլի 13-ին կրկնելով վերջնագիրը Ռաուֆ բէյը նորից դրեց Անդրկովկասի անկախութեան առաջնայնութեան հարցը, այս անգամ արդէն Թուրքիայի դաշնակիցներին բանակցութիւններին մասնակից դարձնելու հնարաւորութեան պատրուակով⁽¹⁰⁸⁾։ Հաստատւում էր Թուրքիայում Աւստրո-Հունգարիայի դեսպանի տեղեկութիւնը արտաքին գործերի նախարար Բուրիանին, որ Թալաթ փաշան Տրապիզոնում տարուող բանակցու-

թիւնները դիտում էր որպէս աւելի շատ լրատուական բնոյթի բանակցութիւններ: «Նախ եւ առաջ պէտք է ճշդել, թէ ի՞նչպիսի դրական ազդեցութեան գործօններ է ներկայացնում Անդրկովկասի Հանրապետութիւնը»⁽¹⁰⁹⁾, ասել է Թալաաթը Պալլավիչինին:

Նոյն օրը՝ Մարտի 31/Ապրիլի 13-ին կայացաւ Անդրկովկասեան Սէյմի նիստը: Սէյմում ներկայացուած բոլոր կուսակցութիւնները, բացի Մուսավաթից եւ Մուսուլմանական Բոկից, վճռականօրէն հանդէս եկան թուրքական ներխուժումից երկրամասի պաշտպանութեան յայտարարութեամբ⁽¹¹⁰⁾:

Երկրամասի ժողովուրդների համար այդ օրհասական պահին, երբ թուրքական ներխուժումը Կովկաս արդէն փաստ էր եւ ոչ վտանգ՝ Սէյմում ունեցած ելոյթում Մուսավաթի ներկայացուցիչ Ռուստամբեկովը Անդրկովկասի ժողովուրդների հակաթուրքական միաւորման եւ հայերի հողի պաշտպանութեան գաղափարը համարեց պատրանք: Նա ընդգծեց, որ Մուսավաթը եւ մուսուլմանական զանգուածները թուրքերի դէմ ակտիւ հանդէս գալ չեն կարող «կրօնական մոտիւններով»: «Մենք տեսնում ենք, որ մուսուլմանական զանգուածներին ղեկավարող բնազդը նրանց կը յուշի ո՞ւմ կողմում լինել եւ որտե՞ղ են նրանց շահերը»: Եւ ապա՝ «Մուսավաթը ոչալ քաղաքականութեան կուսակցութիւն է եւ այն ամէնը ինչ որ նա կարող է տալ՝ տալիս է»:

Կեղծիքը եւ փարիսեցիութիւնը առկայ են նաեւ Մուսավաթի, Ռուսաստանի Մուսուլմանների (Իթթիհատ) եւ անկուսակցականների խմբի անունից ներկայացուած բանաձեւում: Ահա երկիմաստ բանաձեւը. «Մուսավաթ Կուսակցութիւնը կ'անի ամէն ինչ պատերազմը բարեյաջող աւարտելու համար»: Նկատի ունենալով երիտթուրք-մուսավաթական ընդհանրութիւնը՝ մենչեւիկ Ի. Մերեթելին յայտարարեց, թէ «թուրքիան իր բոլոր յոյսերը կապում է մեր ներքին տարածայնութիւնների հետ»: Սոցիալիստ-ինտերնացիոնալիստ Ջուղելին նշեց, թէ «յայտարարելով «չէզոքութիւն» ու լուանալով ձեռքերը, Մուսավաթը այն լուանում է մեր արեամբ, նրանք օգնում են թուրքական իմպերիալիզմին, թուրքական ներխուժմանը: Չէզոքութիւնը այսօր չի կարելի դիտել այլ կերպ՝ քան թշնամու ակտիւ պաշտպանութիւն: Եւ եթէ Մուսավաթի ներկայացուցիչը երկմտօրէն ասում է՝ «կը ձեռնարկենք միջոցներ պատերազմը բարեյաջող աւարտելու համար»՝ չի ասում թէ ո՞ւմ օգտին, դրանով Մուսավաթը ցոյց է տալիս իր դէմքը: Մուսավաթին եւ մուսուլմանական միւս կազմակերպութիւնների վարքագիծը եւ «թուրքական կողմնորոշումը» նա բնորոշեց որպէս «հարուած թիկունքից»:

«Երբ խօսքը գնում է թուրքերի մասին՝ մենք գիտենք ո՞ւմ հետ գործ ունենք: Մենք նրանց ճանաչել ենք մեր արիւնյաներկ պատմութեամբ: Մենք գիտենք թուրքական բարբարոսութիւնը, որի հետեւեանքով թուրքիան ողողուել է իր կողմից ճնշուած ժողովուրդների արեամբ: Մենք գործ ունենք թուրքական Կայսրութեան հետ, որի ամբողջ պատմութիւնը ծածկուած է կանանց, երեխաների եւ ծերունիների արեամբ: Մենք գործ ունենք թուրքիայի հետ, որի հողի իւրաքանչիւր թիզը արիւնյաներկ է ո՛չ թէ այդ պետութեան դէմ կռուած զօրքերի արիւնով՝ այլ խաղաղ ժողովուրդների, որոնք ձգտել են անկախութեան, եւ ցանկացել են ազատութիւն: Եւ այդ պատճառով, ես գիտեմ, որ Բրեստ Լիտովկի պայմանագիրը թուրքիայի համար չի նշանակում երեք «սանջակներ»։ Նրանք կը գնան աւելի հեռու, կը գնան Կոնստանդնուպոլիսը Բաքուի հետ միաւորելու իրենց փայփայած ծրագրով: Եւ հոգ չէ, որ նրանց ճանապարհին կան ուրիշ ժողովուրդներ եւ նրանց կարելի է ջնջել, իսկ թէ թուրքերը «ջնջելու» եւ ոչնչացնելու վարպետներ են՝ բոլորին վաղուց յայտնի է եւ կասկած չի յարուցում»: Այդպիսին էր Դաշնակցութիւն Կուսակցութեան ներկայացուցիչ Մ. Յարութիւնեանի կարծիքը:

Նկատի ունենալով ստեղծուած իրավիճակը՝ Ն. Ժորդանիայի առաջարկութեամբ Սէյմը որոշեց Անդրկովկասեան Պատւիրակութեանը յետ կանչել Թիֆլիս: Ընտրուեց եռեակ մարմին՝ արտակարգ լիազօրութիւններով՝ երկրամասի պաշտպանութեան գործը կազմակերպելու համար: Եռեակի մէջ մտան Ե. Գեգեչկորին, ներքին գործերի նախարար Ի. Ռամիշվիլին, եւ ֆինանսների նախարար Խ. Կարճիկեանը⁽¹¹¹⁾:

Սէյմի որոշումը ստացաւ երկրամասի հասարակական կարծիքի պաշտպանութիւնը: «Թուրքերը իրենց բոլոր կրօնակիցներին կոչ են անում Սրբազան Պատերազմի կովկասեան քրիստոնեաների դէմ. բոլոր մուսուլմանների շրջանում տարւում է մարդատեաց քարոզ՝ զինուած համախմբուել բոլոր ոչ-մուսուլմանների, բոլոր «գեաւուրների» դէմ: Եւ այդպէսով՝ մի կողմից Ռաուֆ բէյը զորուցում է մեր պատուիրակների հետ, միւս կողմից՝ Վեհիբ փաշան մեր դէմ ուղարկում է իր զօրքերը»՝ գրում էր վրացական սոցիալիստների Էրթոքա թերթը: «Մենք ձգտում ենք կնքել խաղաղութիւն, իսկ թշնամիները ճօճում են գէնքը: Մենք հարեւանաբար ձեռք մեկնեցինք թուրքիային, իսկ նա մեր դէմ ոտքի հանեց մեզանում ապրող իր կրօնակիցներին՝ կիրառելով անմեղ մարդկանց արեան ծովում լողանալու իր քաղաքականութիւնը»: Անելով կոչ՝ «բոլորս ոտքի թուրքերի դէմ», թերթը 1918 թուի Ապրիլի 2-ին

գրում էր. «մեր վրայ է յարձակում անողորթ թուրքիան՝ կուլտուրայի, լուսաւորութեան թշնամին, կովկասեան ժողովուրդների դարաւոր թշնամին: Իր բարբարոսութեամբ եւ դաժանութեամբ յայտնի թշնամին եւ նրա դէմ մղուող ազատագրական պատերազմում պէտք է համախմբուեն բոլոր ուժերը», քանի որ «փաշաները գիտեն միայն մէկ միջազգային լեզու՝ զէնքի ճօճման լեզու, գընդակների սուլոց, թնդանօթների որոտ, մեր օճախների, մեր ընտանիքների ոչնչացում, արիւնահեղութիւն»⁽¹¹²⁾:

Պատուիրակութեան անդամներին Տրապիզոնից յետ կանչելու մասին Սէյմի որոշումը պատուիրակութեան մուսուլման անդամների մօտ առաջ բերեց դժգոհութիւն:

Ապրիլի 1/14-ի նիստում Սէյմի որոշումը Հաջինսկին բնորոշեց որպէս «սկանդալ, որին հաւասարը չկայ միջազգային յարաբերութիւնների համաշխարհային պատմութեան մէջ»: Այդ որոշման մէջ տեսնելով անվստահութիւն պատուիրակութեան անդամների նկատմամբ՝ նա առաջարկեց պատուիրակութեան հրաժարականը՝ որպէս առաջին ելք ստեղծուած վիճակից: Երկրորդ ելքը, ըստ Հաջինսկու, կառավարութեան անդամների հրաժարականն էր, երրորդը՝ Սէյմի անդամների հրաժարականը: Չհամաձայնուելով Թիֆլիս գնալու հետ՝ նա ընդգծուած ասաց. «Ես իմ կողմից ասում եմ, որ ունեմ մանդատ իմ կուսակցութիւնից գնալ Կոնստանդնուպոլիս հաշտութիւն կնքելու համար վերջին փորձն անելու»:

«Մամէդ Հասանի մտքի հետ ես ոչ մի դէպքում համաձայն չեմ»՝ յայտարարեց Սատիսեանը: «Այն ինչ պատահեց՝ դրանում կառավարութիւնը մեղք չունի: Կառավարութիւնն իմ միջոցով ժամանակին յայտնել է, որ Բաթումը ոչ մի դէպքում չի կարելի յանձնել»՝ յայտարարեց Տրապիզոն նոր ժամանած ժողովրդական լուսաւորութեան նախարար Ուսուրբեկովը: Նա աւելացրեց. «Ես ոչ Սէյմի, ոչ կառավարութեան կողմից գործուողուած չեմ եւ յատուկ լիազօրութիւններ չունեմ, այդ պատճառով ես պաշտօնական հաղորդում չեմ արել»⁽¹¹³⁾: Դա պատասխան էր Սատիսեանի հարցադրմանը, որ «Ուսուրբեկովի կողմից պաշտօնական հաղորդում չի եղել»: Այդ յայտարարութեամբ Ուսուրբեկովը կեղծում էր իրողութիւնը: Գեգեչկորու Տրապիզոն յղուած թիւ 43/143 հեռագրում Ձիւենկելուն ասուած էր. «Հաղորդում եմ, որ այսօր Տրապիզոն են գալիս լուսաւորութեան նախարար Ուսուրբեկովը եւ Սէյմի քարտուղար Կանտամիրովը»⁽¹¹⁴⁾:

Բանակցութիւնները ընդհատուեցին: Անդրկովկասի Կառավարութեան կանչով պատուիրակութիւնը Տրապիզոնից վերա-

դարձաւ Թիֆլիս: Թուրքական ներխուժումը արդէն կատարուած փաստ էր: Այդ պայմաններում առաջնային էր դառնում Անդրկովկասի պաշտպանութեան հարցը: Իրենց խօսքն ասացին Թիֆլիսի, Երեւանի եւ Բաքուի Հայոց ազգային խորհուրդների, հայ քաղաքական կուսակցութիւնների, զինուորական կազմակերպութիւնների ներկայացուցիչները, Անդրկովկասի Սէյմի եւ կառավարութեան հայ անդամները եւ Երեւանի եւ Կարսի նահանգական կոմիտէների լիազօրները 1918 թուի Ապրիլի 6-8/19-21-ը Ալեքսանդրապոլում կայացած խորհրդակցութիւնում⁽¹¹⁵⁾: Սակայն Սէյմի մուսավաթ-մենչեիկեան մեծամասնութեան համերաշխութեամբ, Թուրքիայի հետեւողական ճնշումը պսակուեց յաջողութեամբ: Ապրիլի 9/22-ին Անդրկովկասի Սէյմը ընդունեց որոշում Ռուսաստանից անջատուելու մասին: Հռչակելով անկախութիւն՝ Սէյմը ընդունեց որոշում Թուրքիայի հետ բանակցութիւնները վերսկսելու մասին: «Օսմանեան Կայսրութեան կառավարութիւնը ճանաչել է Անդրկովկասի անկախութիւնը եւ յայտնել այդ մասին իր դաշնակիցներին»՝ գոհունակութեամբ հեռագրեց Վեհիբ փաշան:

Ստանալով Անդրկովկասի անկախ յայտարարման լուրը՝ Թուրքական կովկասեան բանակի հրամանատարութիւնը Անդրկովկասի Կառավարութիւնից պահանջեց անյապաղ դատարկել Կարսը, ապա թողնել Ալեքսանդրապոլը: Թուրքական զօրքերը ներխուժեցին Արարատեան դաշտավայր: Միայն հայ ժողովրդի մայիսեան հերոսական ճակատամարտը՝ Սարգարապատի, Բաշ Ապարանի եւ Ղարաքիլիսայի տակ կանգնեցրեց Թուրքական արշաւանքը, արգելակեց հայ ժողովրդի բնաջնջմանը եւ նպաստեց Հայաստանի Հանրապետութեան հռչակմանը: Իրենց նուաճումները Թուրքերը դիւանագիտական ճանապարհով «օրինականացրեցին» Բաթումի պայմանագրով, 1918 թուի Յունիսի 4-ին: Յետագայում որոշ փոփոխութիւններով նա ամրապնդուեց 1921 թուի Մարտի 16-ի խորհրդա-թուրքական պայմանագրով:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Izvestia Tzik, Petrograd, 23 Dekabrya, 1917.
2. Prof. U. V. Klyuchnikov; Prof. A. V. Sabanin, *Mejdounarodnaya politika noveishovo vremeni v dogovorakh, notakh i dokumentakh*, ch. P. M. 1926, s. 8-9, 17.
3. V. V. Gotlieb, *Taynaya diplomatiya vo vremya pervoy miravoy voyni*, M., 1960, s. 51.
4. E. F. Ludshvets, *Turtsiya v godi pervoy miravoy voyni, 1914-1918 : voyenno-politicheski ocherk*, M., 1966, s. 25, 33.
5. Mülham Karl, *Das deutsch-türkische Waffenbundes im Weltkriege*, Leipzig, 1940, s. 272; E. F. Ludshvets, s. 157. «Մեզ համար այդ ցանկությունը ուներ երկրորդական նշանակություն, — գրում էր Լիդենհորֆը, — սակայն նրանց սատարումը համապատասխանում էր դաշինքի պայմաններին»: Տես՝ Ludendorf, *Mayi Vospominaniya o Voyne, 1914-1918*, Tom Vtoroy, M. 1924, s. 126.
6. Omar Seyfeddin, *Yarinki Turan*, Istanbul, 1958; Ziya Sakir, *1914-1918 Çihan Harbini Nasil Idare Ettik?* Istanbul, 1944; A. J. Toynbee, *Turkey : A Past and a Future*, New York, 1917; Gotlieb, op. cit.
7. Sovetsko-Germanskiye otnosheniya ot peregovorov v Brest-Litovske do rappalskogo dogovora, T. I, M. 1966, s. 81-82, dok. N° 36.
8. Hikmet Bayur, «Birinci Genel Savastan sonra yapılan Baris ve Analasmalarimiz», *Türk Tarih Kurumu, Belleten*, Sayı 115, Temmuz, 1965, s. 501-504.
9. *Dokumenti i materyali po vneshney politike Zakavkazya i Grouzi*, Tiflis, 1919, s. 24-26, dok. N° 16.
10. *Dokumenti vneshney politiki SSSR*, M. 1957, T. I, s. 34.
11. Bayur, op. cit., s. 507-508, 509-510.
12. *Dokumenti i materyali*, s. 35-36, dok. 22.
13. Նոյն, էջ 36-37 և 40, փաստ. 23 և 25:
14. Նոյն, էջ 39-40, փաստ. 24:
15. *Mirniye peregovori v Brest-Litovske (9/22) dekabrya 1917 g. po 3 Marta (18 Fevralya) 1918 g. ch. I. Plenarniye Zasedaniya politicheskoi komissii. Polniy text stenogrammi pod redaktziyey i s primechanyami A. A. Ioffe (V. Krimskogo)*, s predisloviem L. D. Trotskogo, Izd. NKID, M., 1920, s. 57-63, 127, 185-186.
16. *Arkhiv vneshnei politiki Rossyskoi Federatziyi*, f. 413, op. I, papka 5, dok. 70, c. 1-14, 35-49.
17. Նոյն, թ. 3-4:
18. Նոյն, թ. 4-7:
19. Նոյն, թ. 7-8:
20. *Dokumenti i materyali*, c. 31, dok. 34.
21. ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 9, թ. 168:
22. Անդրկովկասեան Սէյմը ձեւաորոշել էր խորհուրդների երկրային կոմիտեի կողմից՝ երկրամասից եւ կովկասեան ռազմաճակատից սահմանադիր ժողովում ընտրուած պատգամաւորներից եւ Անդրկովկասում գործող գրեթէ բոլոր ազգային եւ քաղաքական կուսակցութիւնների ներկայացուցիչներից: Սէյմի անդամներից 32-ը Սոցիալ-Դեմոկրատական Մենջեիկեան, 30-ը ադրբեջանական Մուսավաթ, 27-ը Հայ Յեղափոխական Դաշնակցութեան, 19-ը Սոցիալիստ-Յեղափոխական Կուսակցութեան անդամներ էին: «Մուսուլմանական Բոլկ», «Հումէթ», «Մուսուլմանները Ռուսաստանում» կազմակերպութիւնները ընդհանուր թուով ունէին 14 ներկայացուցիչ. ընդհանուր առմամբ մուսուլմանները ունէին 44 տեղ՝ 125-ից: Չորս տեղ ստացել էին բուլղերիկները, որոնք հրաժարուեցին մասնակցել Սէյմի աշխատանքներին, մեկական տեղ՝ վրացական ազգային ազատութիւն, սոցիալիստ-ֆեդերալիստների, ազգային դեմոկրատական կուսակցութիւնները: Սէյմի նախագահ ընտրուեց Ն. Զիւէիձէն, տեղակալներ՝ Ս. Տիգրանեանը եւ Հ. Ա-

- դայեր: Ե. Գեգեչկորու գլխաւորութեամբ կառավարութեամբ մէջ հաստատուեցին Խաչատուր Կարէիկեանը, Ալեքսանդր Խատիսեանը, Գեորգ Տէր Ղազարեանը, Համօ Օհանջանեանը եւ Յովհաննէս Քաջազնունին՝ համապատասխանաբար զբաղեցնելով ֆինանսների, պարեմաւորման, աշխատանքի, պետական ապահովութեան, եւ անպորտֆէլ միւնիստրների պաշտօնները:
23. Տես՝ ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 9, թ. 32-44:
 24. Dokumenti i materyali po vneshnei politike Zakavkaziya i Grouzi, s. 71, dok. 45.
 25. ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 9, թ. 32-36, Սէյմի եւ Կոմիսարիատի 1918 թուի Փետրուարի 14-ի եւ երեկոյեան Գիստերի արձանագրութիւնները:
 26. Նոյն, թ. 39 եւ 39ա: Անդրկովկասեան Սէյմի գրառումների մատեան, 1918 թուի Փետրուարի 14/27-ի երեկոյեան Գիստ:
 27. Նոյն, թ. 40:
 28. Ministère des Affaires Etrangères, Documents diplomatiques : Affaires Arméniennes (Projet de réformes dans l'Empire Ottoman), 1893-1897, Paris, MDCCCXC VII [1897].
 29. Johannes Lepsius, Deutschland und Armenien, 1914-1918, Sammlung diplomatischer aktenstücke, Potsdam, 1919.
 30. ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 9, թ. 41-41ա, Անդրկովկասեան Սէյմի եւ Կոմիսարիատի Հաշտութեան Բանակցութիւնների Յանձնաժողովի գրառումների մատեան, 1918 թուի Փետրուարի 15/28-ի երրորդ Գիստ:
 31. Նոյն, թ. 43, 1918 թուի Փետրուարի 15/28-ի չորրորդ Գիստ:
 32. ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 222, ց. 1, գ. 118. Dokumenti i materiali, s. 78-93, dok. 45.
 33. ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 9, թ. 46-46ա, Անդրկովկասեան Սէյմի եւ Կոմիսարիատի Հաշտութեան Բանակցութիւնների Յանձնաժողովի միացեալ Գիստերի գրառումների մատեան, 1918 թուի Փետրուարի 17/Մարտի 2, արձանագրութիւն 7:
 34. Նոյն, թ. 45-46, արձանագրութիւն 7:
 35. Programma i ustav Partii «Musavat». Partiya «Musavat» v proshlom i nastoyashchem, Vip. I, Programma i taktika, Izd. Zakniga, 1927, s. 71-77.
 36. S. Scf. Borba za Otkiyabr v Zakavkazye, Tiflis, 1932, s. 127-128.
 37. Նոյն, էջ 132:
 38. ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 9, թ. 48, արձանագրութիւն 11:
 39. Նոյն, թ. 48ա:
 40. Նոյն:
 41. Նոյն, թ. 49:
 42. Նոյն:
 43. Նոյն, թ. 48 եւ 50ա:
 44. Նոյն, թ. 48ա:
 45. Նոյն, թ. 48:
 46. Նոյն, թիւ 49:
 47. Նոյն:
 48. Նոյն:
 49. Նոյն, թ. 50:
 50. Նոյն:
 51. Հուգարիաշի Պետական Արխիւ, W - 1110, 115, N° 501, 216-218, փաստաթուղթ 190:
 52. Նոյն, W - 1110, p. 4/23, N° 2724:
 53. Նոյն, p. 302, 13642:
 54. Arthur Beylerian, Les Grandes Puissances, L'Empire Ottoman et les Arméniens dans les Archives Françaises (1914-1918), Recueil de documents, Paris, 1983, doc. N° 606, p. 570-572.
 55. Էրթորբաշի յօդուածի թարգմանութեան համար տես՝ Kavkazskoye Slovo, 16 Febralya, 1918:

57. ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 9, թ. 54ա, արձանագրություն 15:
58. Dokumenti i Materyali, s. 86, dok. 49.
59. Josef Pomiankowski, Der Zusammenbruch des Ottomanischen Reiches erinnerungen an die Türkei aus der zeit des Welt-kriege, Zürich/Leipzig/Wien, 1928, s. 334.
60. Dokumenti i materyali, s. 98-99, dok. 53. ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 45, ց. 1, գ. 22, թ. 41:
61. Նոյն, էջ 87-88, փաստ. 51 եւ ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 45, ց. 1, գ. 22, թ. 41:
62. Նոյն, էջ 88-89, փաստ. 52:
63. ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 9, թ. 55-56ա, Անդրկովկասեան եւ Օսմանեան Պատ-իրականութիւնների Ասիականների 1916 թուի Փետրուարի 27/Մարտի 12-ի զրոյցի արձանագրութիւնը: Dokumenti i Materyali po vneshnei politike Zakavkaziya i Grouzi, Tiflis, 1919, s. 113-116, dok. 55.
64. Նոյն, թ. 56, Անդրկովկասեան եւ Օսմանեան պատուիրականութիւնների Ասիականների 1918 թուի Փետրուարի 28/Մարտի 13-ի զրոյցի արձանագրութիւնը: «Փե-տրուար 28-ին Թուրքական Պատուիրականութիւնը այցելեց մեզ. մենք այցելեցինք նրանց փոխադարձաբար: Սիրալիքութեան փոխանակում: Թուրքական պատ-իրականները շատ խօսեցին Անդրկովկասի հետ բարեկամութեան մասին. ոչ մի կոնկրետ բան: Ըստ երեւոյթին՝ պատրաստում են հող: Չի բացառուած հնա-րաւորութիւնը, որ նրանց առաքելութիւնը դրանով էլ կը սահմանափակուի. գրի առաւ պատուիրականութեան գործերի կառավարիչ Մ. Թումանեանը»: Տես՝ նոյն, թ. 186:
- 64բ. ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 9, թ. 61-65, արձանագրություն 19:
65. Նոյն, թ. 158 եւ 158ա:
66. Նոյն, թ. 156:
67. Նոյն, թ. 159:
68. ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 9, թ. 161-162, Տրապիզոնի Կոնֆերանսի երկրորդ ճիս-տի արձանագրութիւնը, 1918 թուի Մարտի 2/15:
69. Նոյն, թ. 163-164:
70. Նոյն, թ. 78-78ա, Անդրկովկասեան եւ Թուրքական Հաշտութեան Պատուիրակու-թիւնների ղեկավարների 1918 թուի Մարտի 2/15:
71. ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 9, թ. 73-74, Անդրկովկասեան Հաշտութեան Պատուի-րականութեան ճիստերի մատեան, 1918 թուի Մարտի 2/15:
72. Նոյն, թ. 165-166, Տրապիզոնի Կոնֆերանսի երրորդ ճիստի արձանագրութիւ-նը, 1918 թուի Մարտի 3/16:
73. ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 9, թ. 167-169ա, Տրապիզոնի Կոնֆերանսի չորրորդ ճիստի արձանագրութիւնը, 1918 թուի Մարտի 7/20:
74. ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 9, թ. 168, Dokumenti i Materyali, s. 132-134, dok. 65:
75. ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 9, թ. 169, Dokumenti i Materyali, s. 134-136, dok. 66:
76. ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 9, թ. 171-173, Տրապիզոնի Կոնֆերանսի հինգերորդ ճիստի արձանագրութիւնը, 1918 թուի Մարտի 8/20:
77. Նոյն:
78. Stavrovski, Zakavkazie posle Oktyabrya, M. 1925, s. 33-34.
79. ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 9, թ. 83-86, արձանագրություն 34:
80. Նոյն, թ. 87-88, արձանագրություն 32:
81. Նոյն, թ. 93 եւ 94, արձանագրություն 34:
82. Նոյն, թ. 95 - 97, արձանագրություն 35:
83. Նոյն:
84. Նոյն, թ. 87, արձանագրություն 34:
85. Նոյն, թ. 100, արձանագրություն 37:
86. Նոյն, թ. 101, արձանագրություն 37:
87. Dokumenti i Materyali, s. 140-146, dok. 69.
88. Նոյն, էջ 147 - 149, փաստ. 70:

89. ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 121, ց. 1, գ. 20, թ. 8 - 10, Թուրքական Պատուիրակության անդամների հետ մշտական յարաբերությունների մէջ էր Խասմամետովը, որը Թեֆիք Սելիմ բէշի, Ռզա բէշի եւ Համի բէշի հետ մտնում էր պատուիրակությունների հիստերի մշակման յանձնաժողովի մէջ: Պատուիրակության թարգմանիչներն էին Ռասուլզադէն եւ Պեպիմովը:
90. Նոյն, ֆ. 200, ց. 1, գ. 9, թ. 103 - 105, արձանագրութիւն 38:
91. Նոյն, թ. 108-109, արձանագրութիւն 40:
92. Նոյն, թ. 110-112, արձանագրութիւն 41:
93. Նոյն, թ. 112ա, արձանագրութիւն 41:
94. Նոյն:
95. Նոյն, թ. 118, արձանագրութիւն 41:
96. Նոյն, թ. 113ա, արձանագրութիւն 41:
97. Նոյն, թ. 114, արձանագրութիւն 41:
98. Նոյն:
- 98բ. Նոյն, թ. 114ա, արձանագրութիւն 41:
99. Նոյն, թ. 116 - 126ա, արձանագրութիւն 42, եւ թ. 127 - 130, արձանագրութիւն 43:
100. Նոյն, թ. 122 - 126ա, արձանագրութիւն 42:
101. Նոյն, թ. 127 - 127ա, արձանագրութիւն 43:
102. Նոյն, թ. 128:
103. Նոյն, թ. 129:
104. Նոյն, թ. 129 - 130:
105. Նոյն, թ. 131 - 132, արձանագրութիւն 44:
106. Նոյն, թ. 134 - 139, արձանագրութիւն 45:
107. Նոյն, թ. 36 - 38, արձանագրութիւն 46, եւ թիւ 28 - 30, արձանագրութիւն 47:
108. Նոյն, թ. 147 - 149, արձանագրութիւն 148:
109. Հունգարիայի Պետական Արխիւ, W - 1110. Չերնիցին Բուխարեստի 1918 թուի Մարտի 13-ին եղած հեռագիրը:
110. Dokumenti i Materyali, s. 166-184, dok. N° 83:
111. Zakavkazski Seim, Stenograficheski otchiot, Tiflis, 1918, s. 174-175.
112. Զօդուածին համար տես՝ Kavkazskoye Slovo, 3 Aprelya 1918:
113. ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 9, թ. 150-151, արձանագրութիւն 49:
114. Նոյն, թ. 143:
115. ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 114:

Հ.Ա.